

4609

34

281.64

h-91 h

1908

42001

2-22

h-91 h

ᠠ. ᠪᠠᠨ - ᠠᠳᠤᠰ

W-

(170)

ԽՐԻՄԵԱՆԻ ՄԱՍԻՆ

*1/2 orange mungy
Rhynchospora styrene
Spermatophyte spore spore
plus hweas. freely growing in mud.
N. (-& opeary). 128 St. 1916.*

1 6 8 10
1062

Þ ʰ ʒ ʟ ʰ U

ԵԼԵՏՐԱԶԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ ՊՕԼԻՑԵՅՍԿ.

1908

(2727)



108482 - ԱԶ

(Արտատպած «ՄՇԱԿ»-ից)



2680
41

ՖԻԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽՐԻՄԵԱՆԻ ՄԱՍԻՆ

I

1889 թվականի ամառն էր, երբ առաջին անգամ տե-
սայ Խրիմեան «Հայրիկին» Կ. Պօլսում: Նա այն ժամանակ
Կուզկունջուկ թաղի եկեղեցում վանահայր Թէ քարոզիչ էր,
լաւ չեմ յիշում: Իսկ ես վերադառնում էի Եւրօպայից և յա-
տուկ Մարսէլի վրայով եկայ, որպէսզի Պօլսում կանգ առ-
նեմ մի երկու շաբաթ: Ես տուրիստ չէի և Պօլսում կանգ
առնելուս նպատակը բոլորովին այն չէր, որ այդ սիրուն
քաղաքի գեղատեսիլ տեսարաններով սքանչանամ: Պօլիս էի
գնում յատուկ միասիայով և այնչափ ոգևորված էի իմ այն-
տեղ ու այլուր կատարելիք գործունէութեամբ, որ բնութեան
կամ այլ ոչ մի գեղեցկութիւն ինձ չէր կարող գրաւել: Հայ-
րենիք՝ Կովկաս վերադառնալուցս մի քանի ամիս յետոյ ես
պիտի գնայի այն վայրը և այն ժողովրդի մէջ, որոնք տա-
րիներից ի վեր ամբողջ հայութեան, մանաւանդ Կովկասի
հայերի գուրգուրանքի առարկան էին կազմում, պիտի գը-
նայի վերջապէս իրագործելու այն «սուրբ ու պաշտելի» գա-
գափարներն ու տենչերը, որ տարիներ շարունակ փայփայել
էի իմ մէջ, բաժանել, գգուել ու ծրագրել սիրելի ու գաղա-
փարակից ընկերների հետ: Եւրօպայից ես հեռացել էի իբրեւ

աւելի քան երկու տարի գոյութիւն ունեցող «Հնչակեան» խմբակի մի կարապետ, որը թիւրքիա պիտի գնար հայ ժողովրդի մէջ տարածելու այն «վիհ» ու «սուրբ» գաղափարները, որոնց ծրագրելու համար անքան անքուն գիշերներ էինք անցկացրել ընկերներով, և որոնք առաջին անգամ, կարենետային շրջանից դուրս գալով, իրական կեանքի մէջ պիտի մտնէին:

Դժուար ու չափազանց մեծ էր վրաս վերցրած միասին, ես այդ շատ լաւ գգում ու հասկանում էի, բայց և այնպէս դա ինձ բոլորովին չէր խանգարում յանդգնութեամբ նպատակիս դիմելու, թէև միևնոյն ժամանակ հէնց այդ գգացումը ստիպում էր ինձ վերին աստիճանի լուրջ և զգուշաւոր կերպով վերաբերվել անելիք իւրաքանչիւր քայլիս:

Մարտէյից մինչև Պօլիս, ճանապարհորդութեանս ամբողջ 6—7 օրվան ընթացքում ես անվերջ երազներով էի միայն ապրում. թէև առաջին անգամն էր նաևով ճանապարհորդելս, թէև ծովն էլ շատ խաղաղ էր ամբողջ ժամանակ, բայց ինձ ոչ մի բան, ոչ մի գեղեցկութիւն չը հրապուրեց. կարող եմ ասել, որ ես ոչինչ չը տեսայ ու ոչինչ չը նկատեցի. այնչափ որ ես յափշտակված էի իմ սեփական ներքին աշխարհով...

Ինչպէս ասացի՝ նպատակս էր մի-երկու շաբաթ Պօլսում մնալ և ապա շարունակել ճանապարհ գէպի Կովկաս: Պօլսում պէտք է մի քանի «կարեւոր» մարդկանց հետ տեսնվէի, նրանց միջոցով «գաղափարակից» ընկերներ գտնէի, «կապեր հաստատէի» և, եթէ հնարաւոր լինէր, գէթ մի փոքրիք կազմակերպութիւն ստեղծէի հնչակեան ծրագրով: Այդպէս էինք որոշել ընկերներին հետ: Սակայն մեզնից և ոչ մէկը Պօլսում ծանօթ անձ չունէր, որին կարողանայի վստահութեամբ դիմել, նպատակներս յայտնել և «գործունէութիւն» սկսել: Միակ կատարելապէս վստահելի անձը յայտնվում էր Խրիմեան Հայրիկը, որի հետ թէև ոչ ոք մեզնից ծանօթ չէր անձամբ, բայց ինչ փոյթ, չէ՞ որ նա ընդհանուր «հայրիկն» էր: Խրիմեանից բացի մենք Պօլսում

ճանաչում էինք, նոյնպէս ոչ անձամբ, «Մշակի» վաղեմի աշխատակից Հայկակին, որին կարող էի նոյնպէս վստահանալ ու միասնայիս մասին յայտնել:

Այդ երկու անձնաւորութիւնները յուսով էի Պօլիս գրնում և դրանց միջոցով պիտի գաղափարակիցներ գտնէի ու «կօնապիրատիւ» յեղափոխական գործունէութեան սկիզբ դնէի նուրբանի մայրաքաղաքում:

Եւ հէնց այդ գործունէութեան մասին էի մտածում, յեղափոխական դէբիւտիս համար զանազան ծրագրեր կազմում ճանապարհորդութեանս ամբողջ ընթացքում. էլ ինչը կարող էր ինձ հետաքրքրել:

Նաւը հագիւ էր կանգ առել Ղալաթիայի նաւահանգրստում, երբ մի երիտասարդ մազլցեց նրա վրա և, ուղղակի ինձ մօտենալով, հարցրեց.

—Պ. Գրիգոր Արծրունին չէ՞ եկած այս նաւով:

—Ոչ,—պատասխանեցի,—Արծրունին Պարիզից գնաց ժընէվ և, երևի, այնտեղից էլ ցամաքով Կովկաս կը վերադառնայ:

—Բայց հոս անոր կը սպասեն. լուր տարածված է, որ Փարիզէն Պօլիս պիտի գայ. անոր ընդունելութեանը համար պատրաստութիւններ տեսնված են:

—Ձը գիտեմ, գուցէ այդպիսի դիտաւորութիւն ունեցել է: Բայց՞ դուք ո՞վ էք:

—Ես «Արեւելի» մէջ կաշխատիմ, «Արձագանքին» թղթակցութիւններ կը խրկեմ այս-ինչ (չեմ յիշում) ստորագրութեամբ: Իսկ անունս Գրիգոր Կալֆայեան է: Դուք պիտի ինչնէք Պօլիս: Եթէ քաղաքին անձանօթ չէք, կրնամ դձեզ առաջնորդել:

Ի հարկէ, սիրով ընդունեցի երիտասարդի առաջարկը և խնդրեցի՝ ինձ մի էփանագին հիւրանոց տանել: Նա ինձ տարաւ Սիրքեջի թաղը, «Օսմանիէ» անունով հիւրանոցը, ուր և ապրեցի աւելի քան երկու շաբաթ, իսկ ինքն էլ համարեա թէ ամբողջ ժամանակ իմ անբաժան չիչերօնէն դարձաւ: Աւելին պիտի ասել, Գրիգոր Կալֆայեանը ոչ միայն

իմ չիչերօնէն դարձաւ Պօլսում, այլ և նա «Հնչակի» առաջին Պօլսի թղթակիցը և թերթերը մեծ քանակութեամբ ստացող ու տարածողը դարձաւ:

Պօլիս հասնելու հէնց երկրորդ օրը այդ Կալֆայեանի ուղեկցութեամբ շոգենաւակ նստեցի ու անցայ Պօլսի ասիական մասը «Հայրիկին» տեսնելու Կուզկունջուկի եկեղեցում: Բայց մենք խորհեանքին այնտեղ չը գտանք. նա անցել էր եւրօպական մասը, իսկ թէ ո՞ր էր գնացել, այդ մասին մեզ ոչինչ չը կարողացան ասել:

—Հայրիկը մի քանի տեղեր ունի, ուր սովորաբար կերթայ,—ասաց ինձ չիչերօնէս.—վերադառնա՛նք Պօլիս, ևս զայն կը գտնեմ:

Եւ նա ինձ բացատրեց, որ խորհեանքը սիրում է վանեցիների խաները ու սրճարանները գնալ, ուր իր հայրենակիցների շրջանում նա իրան շատ երջանիկ է զգում:

—Պէտք է ամենէն առաջ երթալ Իւսուֆեան խանը,—բացատրում էր ինձ ճանապարհին Կալֆայեանը—եթէ հոն չը գտնենք, կերթանք Սաչիկ աղայի խանը, իսկ եթէ հոն ալ չը գտնենք, կերթանք այս-ինչ ու այն-ինչ սրճարանը:

Կալֆայեանը առհասարակ ինձ հետ այնպէս էր խօսում, կարծես թէ ես այդ բոլոր մարդկանց ու անուններին ծանօթ ու տեղեակ լինէի:

—Առաջնորդեցէք ինձ, եղբայր, ուր որ գիտէք միայն թէ շուտով Հայրիկին գտնենք,—ասում էի ես նրան համբերութիւնս հատած:

Բաւական երկար՝ փնտռեցինք մենք խորհեանքին, բայց և ոչ մի տեղ չէինք կարողանում գտնել: Կալֆայեանն էլ սկսել էր յուսահատվել, տեսնելով որ իր ենթադրութիւնները սխալ դուրս եկան: Երկուսով էլ արդէն յոգնած հիւրանոց էինք վերադառնում, երբ յանկարծ՝

—Ահա Հայրիկը—բացականչեց ուրախացած Կալֆայեանը:

Այդ բացականչութիւնը լսեց խորհեանքը և ինքն էլ կանգ առաւ, իր արծուային հայեացքը ինձ վրա ուղղելով:

—Առտուընէ ի վեր ձեզ կը փնտռենք, Հայրիկ, ու չենք գտնել,—ասաց Կալֆայեանը.

—Մա, մէկ Սայրիկ, մէկ Պօլիս. ո՞ր պիտի կրնաք գտնել Սայրիկը,—պատասխանեց խորհեանքը իր սովորական իւմօրով:

Այդ միջոցին ես նրան մօտեցայ ձեռքը սեղմելու, բայց նա, ենթադրելով թէ մտադիր եմ համբուրել, ձեռքը փախցրեց ու զլխիս վրա դրեց: Կարճ կերպով յայտնելով նրան որտեղից գալս, խնդրեցի ասել, թէ երբ և ի՞նչ ժամանակ կարող եմ իրան աւելի երկար տեսնել:

—Վաղը փօստի օր է, տունը պիտի նստիմ ու նամակներ պիտի գրեմ. եկուր վաղը առաւօտ Կուզկունջուկ:

—Հայրիկ, բանաստեղծ Յովհաննէս Յովհաննէսեանն ալ այստեղ է, Փարիզէն եկած է և նոյնպէս կուզէ զձեզ տեսնել,—ասաց Կալֆայեանը:

—Հա, շատ լաւ, ես ալ կուզեմ զայն տեսնել. երկուքն ալ առ բեր վաղը ժամը 11-ին,—ասաց խորհեանքը, ինձ վրայ ցոյց տալով.—ես տունը կը սպասեմ:

—Ոչ, Հայրիկ, ես պ. Յովհաննէսեանի հետ չեմ գալ, ասացի ես խորհրդաւոր ձայնով.—ես ձեզ հետ առանձին խօսելիքներ ունեմ:

—Այնպէս է նէ, դու մի երկու ժամ վերջը եկուր, ես Յովհաննէսեանը շուտ կը ճամբեմ,—նոյնպէս խորհրդաւոր կերպարանք ընդունելով, պատասխանեց ինձ խորհեանքը, և մենք բաժանվեցինք:

Միւս օրը խորհեանքի մօտ գնացի ոչ Կալֆայեանի հետ, որովհետեւ սա պ. Յ. Յովհաննէսեանին պիտի ուղեկցէր, այլ գէլթունցի «հռչակաւոր» Յարութիւն Զաքրեանի ուղեկցութեամբ, որի հետ ծանօթացել էի հէնց նոյն օրը Կալֆայեանի միջոցով և որը հէնց առաջին անգամից ինձ երեաց ձեռք այն մարդկանցից մէկը, որոնց եկել էի Պօլսում փնտռելու:

II

Յարութիւն Չաքրեանի հետ Խրիմեանի Կողովուրդուկի կացարանը մտնելով, նրան գտայ մեծ սենեակի ճակատում դրված թախտի վրա ծալապատիկ նստած, մի քանի պարոնների հետ խօսելիս: Մեզ հետ բարեկեց և իր կողքին նստեցնելուց յետոյ, նա դարձաւ այն պարոններին, ասելով՝

— Էհ, բաւական է որչափ նստեցաք. ելէք-գացէք:

Այդպիսի «սան-ֆասօն» ձևով հիւրերին հեռացնելը ինձ Եւրօպայից եկողիս վրա շատ տարօրինակ տպաւորութիւն թողեց. բայց յետոյ իմացայ, որ Խրիմեանը, չը մոռանալով երբէք, թէ ինքը ընդհանուր հայերի «հայրիկն» է, և ըստ նահապետական սովորութեան՝ իր «որդիներին» հետ շատ ցերեմօնականեր անել չէ սիրում, և ոչ ոք էլ չէ վերաւորվում նրա այդ sans façon ձևերից:

Հիւրերի հեռանալուց յետոյ, նա դարձաւ դէպի ինձ ցոյց տալով Չաքրեանի վրա.

— Այս բուլաշըղին (խառնակչին) ռւտեղէն գտար: Հիմա քիչ մը կը հասկնամ ինչ մարդ ըլլալդ. երեւի, դու ալ ասոր պէս բուլաշըղ ես:

Թէև Կալֆայեանը, Չաքրեանի հետ ծանօթացնելով, ինձ արդէն ասել էր նրա «բուլաշըղ» լինելու մասին (բուլաշըղ—յեղափոխականի իմաստով), թէև ինքը Չաքրեանը ամբողջ մէկ ու կէս օրվայ ընթացքում շատ էր աշխատել ինձ ցոյց տալու, թէ ինքը մի մեծ յեղափոխական է և իր ձեռքի տակ արդէն ահագին յեղափոխական կազմակերպութիւններ ունի թէ Պօլսում և թէ գաւառներում, մանաւանդ Զէյթունում, բայց ես մինչև Հայրիկի տուած վկայութիւնը խիստ թերահաւատութեամբ էի վերաբերվում Չաքրեանի ու Կալֆայեանի պատմածներին: Իսկ Խրիմեանի ատեստացիան լսելով, ես մտքումս սաստիկ ուրախացայ, մտածելով թէ կը նշանակէ՝ հէնց առաջին քայլից ճիշտ կրէտի բոյնը գտել եմ:

— Անունդ ի՞նչ է. երէկ ըսիր, ամմա չիմացայ:

— Սանազատեան, շուտասելուկով պատասխանեցի ես:

— Ինչպէս ըսիր:

— Սանազատեան, — կրկնեցի ես, այդ երկու բառերը միմեանցից բաժանելով:

— Օճօ, այդ շատ երկար եղաւ. «խան»-ը քեզի թող մնայ, ազատը ինձի տուր, — ասաց նա իր սովորական ծիծաղով. — դէհ, պատմէ տեսնեմ Եւրօպայէն ի՞նչ խաբարներ բերած ես Հայրիկին: Բայց չէ, մեզ հոս կը խանգարեն, ել երթանք միւս սենեակը, իսկ Չաքրեանը թող երթայ քիչ մը պտտի, կամ թող հոս մեզի սպասէ:

Այս ասելով նա վերկացաւ տեղից և ինձ առաջնորդեց միւս սենեակը, իսկ Չաքրեանը գնաց «քիչ մը պտտելու»:

Այդ «միւս սենեակը» մի իսկական վանական խուց էր, հազիւ մի քանի քայլ երկարութեամբ ու լայնութեամբ, որը, ինչպէս երևում էր, «հայոց Հայրիկի» համար թէ ննջարանի և թէ առանձնասենեակի դեր էր կատարում: Այդտեղ կար մի շատ հասարակ թախտ, մի հին ու կիսամաշ գորգով և տաճկական փոքրիկ մինդարով ծածկված, մի հատ շատ հոյսարակ ու խունացած սփռոցով ծածկված սեղան և մի հատիկ աթոռ: Խրիմեանը բարձրացաւ ու նորից ծալապատիկ նստեց թախտի վրա, կրթնելով ձախ կողմում դրված բարձերին, իսկ ես նստեցի այն միակ աթոռի վրա:

— Հը, կը տեսնե՞ս Հայրիկի խուցը. ձեր էջմիածնայ եպիսկոպոսները այսպիսի խուցերու մէջ չեն ապրիր: Հայրիկը սամօվար ալ չունի, որ քեզի թէյ հրամցնէ. մենք աւելի սուրճ կը գործածենք, բայց չը գիտնաս, թէ ձեր եղանակով պատրաստած սուրճ է:

— Այս 2—3 օրվայ մէջ արդէն փորձեցի տաճկական սուրճը, Հայրիկ, և շատ հաւանում եմ, — պատասխանեցի ակնածութեամբ:

— Անպէս է նէ, թող մեզի մէյ-մէկ սուրճ բերէ, — ասաց Հայրիկը և կանչելով ծառային հրամայեց սուրճ պատրաստել:

Մինչև սուրճ պատրաստելն ու բերելը, որ մի քանի րօպէ հազիւ տևեց, Խրիմեանը լուրջ խօսակցութեան չը դի-

մեց. երևի այն նպատակով, որ յանկարծ ծառան չը գայ ու մի բան չը լսի:

Ինչպէս իմ արած պատմութիւնից տեսաւ ընթերցողը, ես Խրիմեանին դեռ ոչինչ չէի ասել իմ միասնայի մասին, բայց նա, մասամբ ինձ «բուլաշըղ» Չաքրեանի հետ տեսնելուց և մասամբ, գուցէ և աւելի, դէմքիս վրա կարդալով, արդէն գուշակել էր իմ ինչ մարդ լինելը և հասկացել, որ իմ իր հետ ունեցած տեսակցութեան նիւթը խիստ գաղտնի բան պիտի լինի: Ծիշտ տեղն է այստեղ ասել, որ Խրիմեանը մարդկանց դէմքերը կարդալու հանճարեղ ընդունակութիւնն ունէր. նա կարողանում էր, շատ քիչ բացառութեամբ, հէնց առաջին անգամից իր պատահած մարդու սրտի ու հոգու ներսը թափանցել ու նրա ամենաթոյլ երակները բռնել:

Երբ ծառան փոքրիկ գաւաթներով տաճկական սուրճը բերեց ու հեռացաւ,

—Դէհ, հիմա ըսէ նայիմ, ի՞նչ խօսելիք ունէիր Հայրիկի հետ,—ասաց Խրիմեանը, բթամատի հաստութեամբ պապիրոսը փաթաթելով ու առջևում դրված մի խուրձ հաստ մուշտուկներից մէկի մէջ սաղեցնելով:

Նա ինձ էլ առաջարկեց իր թութունից ծխելու, որը ես, ի հարկէ, ընդունեցի և սկսեցի իմ ճառը.

—Հայրիկ, թէև այս րօպէիս ես Պարիզից եմ գալիս, բայց իրապէս պիտի ասեմ, որ գալիս եմ Ժընէվից. Պարիզ գնացել էի ցուցահանդէսը ու մի քանի ընկերներ տեսնելու, իսկ մօտ 5 տարի Ժընէվում էի ուսանում: Ես եկել եմ «Հնչակ» թերթը հրատարակող խմբակի կողմից...

—Հա, գիտեմ, կարդացած եմ մի-երկու օրինակ,—ընդհատեց ինձ Խրիմեանը.—աղէկ կը գրէ, Փորթուգալեանն ալ աղէկ կը գրէ: Էհ, հիմա ի՞նչ կուզես, տղաս:

—Ոչինչ չեմ ուզում, Հայրիկ, կը խնդրէի միայն ասել ինձ ու խորհուրդներ տալ, թէ այստեղ Պօլսում ի՞նչ մարդկանց հետ կարող ենք մենք կապեր հաստատել ու «գործել», որովհետև Կովկաս վերադառնալուցս մի երկու ամիս

յետոյ ես Տաճկաստան պիտի գնամ «գործելու», իսկ քիչ յետոյ ուրիշ ընկերներ էլ պիտի գան և երկրի աւելի խորքերը պիտի գնան: Ցանկալի է, որ Պօլսում էլ հաւատարիմ գործակիցներ ու կազմակերպութիւն ունենանք:

—Ադ ի՞նչ պիտի ընէք, Խայաստան պիտի աղատէք,—ասաց նա կէս հարցական և կէս հեգնութեամբ:

Այդտեղ ես արդէն սկսեցի իմ ամբողջ երիտասարդական եռանդով ու ֆանատիկոսութեամբ բացատրել Հայրիկին «Հնչակ» մանրամասն ծրագիրը՝ հեռաւոր սօցիալիստական ապագան, Հայաստանի մօտակայ ռամկավարական կառավարութիւնը, մեր ապագայ գործունէութեան եղանակներն ու տակտիկան, մի խօսքով՝ այն բոլորը, որ այն ժամանակ իմ հաւատոյ հանգանակն էին կազմում և որոնցով ես ուղղակի շնչում ու ապրում էի:

Ամբողջ խօսակցութեան ժամանակ Խրիմեանը շատ մեծ ուշադրութեամբ ու լրջութեամբ լսում էր ինձ. նա դիտում էր ինձ ու տեսնում, թէ ինչպէս իմ աչքերը փայլատակում էին ու շրթներս դողում յուզմանքից: Նա ինձ մի անգամ միայն փորձեց ընդհատել.

—Իսկ ի՞նչ պիտի ըսեն և ի՞նչպէս պիտի վերաբերվեն Անգլիան ու ձեր Ցարի կառավարութիւնը. չէ՞ որ եւրօպական դիպլոմատիայէն է կախված Հայաստանի ճակատագիրը:

—Ոչ, Հայրիկ,—բացականչեցի ես,—դուք ինքներդ շատ անգամներ քարոզել էք, որ, առանց հայերի ինքնագործունէութեան, եւրօպան ոչինչ չի անի մեզ համար:

Եւ սկսեցի մի նոր ճառ, այս անգամ մանրամասն բացատրելով այն հարցը, թէ ինչպէս եւրօպական պետութիւններէն իւրաքանչիւրը, մանաւանդ Անգլիան ու Ռուսաստանը, ինչպիսի շահեր ունեն թիւրքիայում, թէ ինչպէս այդ շահերը սերտ կապ ունեն Հայաստանի ազատութեան հարցի հետ, և թէ ինչպէս նրանք Հայաստանի ապստամբութեամբ ստիպված պիտի լինեն միջամտելու: (Այդպէս էինք այն ժամանակ մենք հաւատում):

Ի դէպակաւ աշխարհայեցողութեամբ «հայկական հար-

ցի» իմ տուած բացատրութիւնները, նրան շատ հեշտութեամբ լուծելու միջոցներն ու եղանակները, մի խօսքով՝ այն ժամանակներում մեր բոլորիս ունեցած ամբողջ երիտասարդական մոլորութիւնները լսելով, — մոլորութիւններ, որոնց մէջ դժբաղդաբար դեռ այսօր էլ գտնվում է հայութեան ահագին մեծամասնութիւնը, — Խրիմեանն էլ սաստիկ ոգևորվեց. նրա հմայիչ ու խիստ արտայայտիչ աչքերն էլ սկսեցին փայլել: Նա, որ մինչ այդ ժամանակ շատ ընկճված էր երևում և կռացած ու կուչ եկած նստած էր, հետզհետէ սկսեց ուղղվել և ուղղահայեաց դիրք ստանալ: Իսկ երբ ես իմ խօսելիքը վերջացրի և յաղթական ու պարծենկոտ հաշկացրով սպասողական դիրք ընդունեցի, մտածելով մտքումս՝ «դէհ, ասա տեսնեմ, հիմա ի՞նչ կարող ես ասել», Խրիմեանը յանկարծ, «դուն դիս ոգևորեցիր, տղաս» ասելով, երիտասարդական աւելնով ցատկեց թախտից և իր հսկայ հասակով կանգնեց կողքին:

— Ինչպէս կը տեսնեմ, պզտիկ ես, ամմա չըստիկ ես, — ասաց նա և, փաղաքշական կերպով խփելով վըզիս, աւելացրեց. — այս ալ քեզի Հայրիկի օրհնութիւնը:

Այդ ասելով նա դուրս եկաւ սենեակից և մի րօպէից վերադարձաւ կրկին, ձեռքումը երեք գիրք բռնած:

— Առ, քեզ իմ գրքերէն նուիրեմ, — ասաց նա, — գիտեմ, չը պիտի կարդաս, իսկ եթէ կարդաս ալ, մէջի գրվածներուն չը պիտի հաւատաս, բայց Հայրիկէն յիշատակ պահէ քովդ: Դու քո մարդդ արդէն գտեր ես, — ասաց նա կարճ լռութիւնից յետոյ. — այդ Չաքրեանը քեզի պէտք եղած մարդկանց հետ կրնայ ծանօթացնել:

Եկեղեցու դանգերը խփում էին. Խրիմեանը եկեղեցի պիտի գնար, իսկ ինձ էլ հարկաւոր էր Պօլիս վերադառնալ. Չաքրեանն էլ արդէն վերադարձել, ինձ էր սպասում:

— Դուն Պօլիս դեռ պիտի մնաս. նորէն եկուր Հայրիկին տեսնելու, — ասաց Խրիմեանը, երբ ես հրաժեշտի ողջոյն էի տալիս. — ես փօստի օրերը միշտ տունը կըլլամ:

Ես ասացի, որ պիտի մնամ, և խոստացայ կրկին ան-

գամ գալու: Նա հետս դուրս եկաւ ինձ ձանապարհ գցելու, բայց շեմքից դեռ դուրս չեկած յանկարծ ինձ կանգնեցրեց ու հարցրեց՝ — Դուն դիւամիտ շինել գիտես. կրնաս ինձի հասկացողութիւն տալ:

Նիտրօգլիցերինի, ուումբեր շինելու ու նրանց գործածելու եղանակի մասին իմ տուած բացատրութիւնները լըսելուց յետոյ, Խրիմեանը փոքր ինչ իխասթափված ձայնով ասաց.

— Քո պատմածին նայելով, ուումբ գործածողն ալ կրնայ վտանգվիլ. հայ ազգը շատ քիչուր է, պէտք է հայերէս շատ քիչ մարդ մնասիլ:

Ես ժպտացի և սկսեցի նորից նրան համոզել, որ առանց զոհերի, առանց մեծ փնտնների երբէք ազգերը ազատութիւն չեն գտել, ուրեմն ի՞նչպէս կարող են հայերը բացառութիւն կազմել:

— Այդ բոլորը աղէկ կըսես, ամմա հայ ազգը շատ պզտիկ է. կը վախնամ, որ մինչև ազատութեան գալը տակը բան չը մնայ.

Այդ եղաւ Խրիմեանի վերջին եզրակացութիւնը, և մենք բաժանվեցինք:

III

Խրիմեանից բաժանվելուց յետոյ Չաքրեանը նկատելով ձեռքումս բռնած գրքերը, (այդ գրքերն էին՝ «Սիրաք և Սամուէլ», «Դրախտի ընտանիք» և «Մաչի Կտակ»),

— Հը, Հայրիկը քեզ ավ տուաւ իր սովորական նուէրները, — ասաց նա հեգնական ձայնով. — նա շատ կը սիրէ իր գրքերը նուիրել:

Չաքրեանի այդ խօսքերը ինձ վրա փոքր ինչ սառը ջուր ածեցին. ես, որ հաւատացած էի, թէ Հայրիկից այդ գրքերը ստանալով մի առանձին բաղդի եմ արժանացել, յանկարծ իմանում էի, թէ «Հայրիկը շատ կը սիրէ իր գրքերը նուիրել»...

Այնուամենայնիւ ես մեծ կարեւորութիւն չը տուեցի այդ խօսքերին և, Խրիմեանի հետ ունեցածս տեսակցութիւնից յետոյ, աւելի վստահութեամբ ու մտերմաբար վերաբերեցի Չաքրեանին: Այդ բանից սիրտ առած, սա էլ իր կարտերը սկսեց բանալ իմ առաջ, որոնցից հեշտութեամբ կարելի էր նկատել, որ այդ գովված բուլշըղը շատ աւելի շուտ մի մանիակ է, մի շատ ինքնահաւան, իր մասին երեւակայող մանիակ, եթէ չասել աւելին...

Հետեւեալ պօստի օրը ես կրկին գնացի Խրիմեանի մօտ: Այս անգամ գնացի միայնակ, որովհետեւ ճանապարհը արդէն սովորել էի:

Խրիմեանը դարձեալ շատ սիրով ընդունեց ինձ և սկսեց հարց աւ փորձ անել, թէ ում հետ եմ տեսնվել Պօլսում, ինչ տպաւորութիւններ եմ ստացել և այլն: Երբ, ի միջի այլոց, ասացի, որ Սրուանձտեան եպիսկոպոսի հետ էլ եմ տեսնվել,

—Ան իմ աշակերտն է,—ասաց Հայրիկը,—բայց ինձմէ տարբեր մարդ է. քիչ մը արծաթասէր է:

Յետոյ նա սկսեց հարց ու փորձ անել Եւրօպայի հայ ուսանողութեան մասին. թէ որտեղ ի՞նչ ուսանողներ կան, ի՞նչ մասնագիտութիւն են սովորում, թէ ես ինքս ի՞նչ մասնագիտութիւն եմ սովորել, թէ ի՞նչ բան են իմ սովորած հասարակական գիտութիւնները, ի՞նչ է քաղաքատնտեսութիւնը և այլն: Եւ նա մեծ հետաքրքրութեամբ էր լսում իմ բոլոր բացատրութիւնները:

Ինչպէս յայտնի է, Խրիմեանը մի կատարեալ Էնցիկլօպիդիստ էր. նա գիտութեան բոլոր ձիւղերի, բոլոր մասնագիտութիւնների մասին յայտնի չափով որոշ ու լաւ հասկացողութիւն ունէր: Իսկ այդ բոլորը նա ձեռք էր բերել զբոսարար իր պատահած մարդկանց խօսեցնելով ու նրանց մանրազնիւնի բացատրութիւնները լսելով, որ նա, իր զարմանալի ու տարօրինակ յիշողութեան շնորհիւ, կարողանում էր մտքումը պահել և հարկաւոր եղած դէպքում խորշել ու էֆէկտ առաջացնել:

Երկրորդ այցելութեանս ժամանակ անհամբեր սպա-

սում էի, թէ երբ Հայրիկը նորից պիտի իմ գոյափայած հարցին ու խօսակցութիւնը վերադառնայ: Եւ նկատում էի, որ նա կարծես թէ խուսափում էր այդ հարցից. նա վախենում էր, թէ մի գուցէ եղած խօսակցութիւնները յանկարծ մի օր իրականութիւն դառնան և հայ ազգի արիւնը Թափվի: Դրա մէջ ես համոզվեցի, երբ ինքս նորից այդ խօսակցութիւնը բացի: Իսկոյն նկատեցի, որ Հայրիկի՝ նախկին տեսակցութեանս ժամանակ տեսած՝ ոգևորութիւնը բոլորովին անցել է, նա դարձեալ շատ սկեպտիկ էր դառել: Նա այս անգամ շատ աւելի մեծ նշանակութիւն էր տալիս եւրօպական դիպլօմատիային և աշխատում էր մեծ պետութիւններից իւրաքանչիւրի դիպլօմատիական խաղերի ամենախրթին խորքերը թափանցել: «Ի՞նչ պիտի ըսէ Գլադստօնը, ինչպէս պիտի վերաբերվի Սօլիզբերին, ի՞նչ կասէ Բիսմարկը, ցարը և այլն», այս հարցերի շուրջն էին դառնում Խրիմեանի բոլոր խորհրդածութիւնները, դրանք էին նրա մտահոգութեան ամբողջ առարկան: Իմ ասածներն ու գործ դրած ամբողջ ճարտասանութիւնը նրա վրա այլևս չէին ազդում:

—Դուք խենթեր եք:

Այս եղաւ մեր երկրորդ տեսակցութեան ժամանակ Խրիմեանի արած վերջին եզրակացութիւնը:

Հայրիկի հետ միասին վերադարձանք Պօլսոյ, և որովհետեւ շոգենաւակի առաջին կլասում բոլորովին միայնակ էինք, ես աշխատում էի դարձեալ ու դարձեալ նրան ոգևորել ու համոզել, որ առանց յեղափոխութեան, առանց արիւն թափելու եւրօպացիք չեն միջամտի ու Հայաստանն էլ չի ազատվի. իսկ նա շարունակ կրկնում էր, թէ ի՞նչ կասեն Բիսմարկը, Գլադստօնը և այլն: Խօսակցութեան վերջում, կարծես թէ կամենալով ինձ գիշողութիւն անել,

—Բայց աշխատելու է, որ հայերէն շատ քիչ մարդ գոհվի,—ասաց նա:

Շոգենաւակը արդէն կամուրջի վրայի նաւահանգիստն էր հասել. մենք դուրս եկանք և հէնց կամուրջի վրա էլ ես նրան վերջին հրաժեշտս տուեցի:

—Հայրիկը չը մոռանաս,—ասաց նա,—ուր որ երթաս՝ նամակ գրէ:

IV

Ճիշտ մի տարի էր անցել, երբ ես նորից Պօլիս վերադարձայ: Այս անգամ արդէն ես գալիս էի «գործի» վայրից՝ Տրապիզոնից: Նոր էր տեղի ունեցել էրզրումի առաջին ցոյցը (1890 թ. յունիսի 8-ին), որի ժամանակ մի 10—15 հայեր էին սպանվել ու վիրավորվել: Չէ կարելի ասել, թէ այդ ցոյցը հնչակեանների գործն էր, բայց և այնպէս այդ ցոյցը կազմակերպող փոքրիկ կազմակերպութեան ղեկավարները—եղբարք Խաչատուր և Տիգրան Կերեկցեանները, Գեորգ Չիլինգիրեանը մի երկու ամիսներից ի վեր բանակցութեան մէջ էին գտնվում Տրապիզոնում արդէն կազմակերպված հնչակեան կենտրոնական վարչութեան հետ, և մեծ յոյս կար, թէ էրզրումի կազմակերպութիւնը պէտք է հնչակեան մասնաճիւղ դառնար: Անժամանակ անսպասելի կերպով տեղի ունեցած էրզրումի այդ ցոյցը խիստ ցնցող ազդեցութիւն ունեցաւ Տրապիզոնի հնչակեան կենտրոնական վարչութեան վրա, և սա ուղեց օգտվել հանգամանքից և մի աւելի մեծ և լաւ կազմակերպված ցոյց առաջացնել հէնց Պօլսում, որպէսզի կարելի լինի աւելի լաւ կերպով հայկական հարցի վրա դարձնել մեծ պետութիւնների ուշադրութիւնը:

Մօտաւորապէս այդ ժամանակներում Պարիզից Պօլիս էր եկել մեր ընկեր Գ. Կաֆեանը (Շմաւոնը) և արդէն կարողացել էր հնչակեան դրօշակի շուրջը հաւաքել մի քանի բաւականին ընդարձակ, երբեմն միմեանց հետ ոչ մի կապ չունեցող, կազմակերպութիւններ: Այդ կազմակերպութիւնները մինչև Կաֆեանի Պօլիս գալը համարեա թէ ոչ մի գործունէութիւն չունէին. նրանք միմիայն դրամ էին հաւաքում և այդ դրամով «Արմենիա» ու «Հայաստան» (կէս-հայերէն, կէս-ֆրանսերէն թերթը, որ այն ժամանակ հրատա-

րակվում էր Լօնդօնում ոմն Բրուսալիի և Սըվազլիի ձեռքով) թերթերն էին ստանում, կարդում և իրանց շրջաններում տարածում: Կաֆեանը, այդ կազմակերպութիւնների մէջ ընկնելով, իր եռանդուն ու կրակոտ պրօպագանդայի շնորհով, շատ հեշտութեամբ էր կարողացել զրանց բոլորին էլ հնչակեաններ դարձնել: Այդ դեռ բաւական չէ. ընդամենը մի քանի շաբաթվայ ընթացքում նրան աջողվել էր եղած կազմակերպութիւնների շրջանակները սաստիկ ընդարձակել և մի բաւականին պատկառելի ոյժ ստեղծել:

Էրզրումի ցոյցի և «հայկական կոտորածի» (այն ժամանակ պատմում էին, թէ 60—80 հայեր են սպանվել) լուրը Պօլիս հասնելով, Կաֆեանի և այնտեղի հնչակեան նորակազմ մասնաճիւղի վարչութեան անդամների մէջ էլ էր նոյն միտքը յղացել, ինչ որ Տրապիզոնի հնչակեան կենտրոնական վարչութեան անդամների մէջ, այն է՝ իբրև թիւրք կառավարութեանը հակահարուած, մի մեծ ու կազմակերպված ցոյց կատարել հէնց սուլթանի մայրաքաղաքում: Եւ որպէսզի այդ ցոյցը լաւ կազմակերպված լինի, որոշվեց Տրապիզոնից մի քանի «գործիչներ» ուղարկել Պօլիս: Այդ գործիչներն էին՝ Մուշից ճիշտ այդ ժամանակներում Տրապիզոն եկած Ալէքսան Բօստօմեանը, կառավարութեան կողմից էրզրումից, իբրև յեղափոխական, հեռացված տխրահոշակ Մամբրէ վարդապետը, Յակոբ Մեղաւորեան և տողերիս գրողը: Վերջին երկուսս հնչակեան կենտրոնական վարչութեան անդամներ էինք:

Կառավարութեան ուշադրութիւնը չը գրաւելու համար, մենք բոլորս միասին չը դնացինք Պօլիս, այլ զատ-զատ, և, եթէ յիշողութիւնս ինձ չէ դաւաճանում, ես զնացողներից վերջինս էի:

Երբ Պօլիս հասայ, աշխատանքը արդէն եռում էր. ընկերներս՝ առաւօտից մինչև կէս գիշերը անց՝ շարունակ այս ու այն խաներն էին շրջում, պրօպագանդ անում, կազմակերպութիւնների շարքերը մեծացնում ու խտացնում: Ամեն տեղ էրզրումում տեղի ունեցած դէպքերն էր խօսվում և



ծրադիր մշակվում, թէ երբ և ինչ եղանակով պիտի կատարվի Պօլի ցոյցը:

Խրիմեանի հետ արդէն տեսնվել էին ընկերներս. պատմում էին, որ նա խիստ ընկճվել է Էրզրումի դէպքից, բայց նրան ոչինչ չէին ասել կատարվելիք ցոյցի մասին: Տեղական հրչակեաններից ոմանք նոյն իսկ չէին ցանկանում, որ նա իմանայ մեր անելիքները, «որովհետեւ,—ասում էին նրանք,—ան չի կրնայ համակրել ու արգելք կը հանդիսանայ»:

Ընկերներն այդ ասածներին եւ կարեւորութիւն չը տուեցի և, երբ այցելութեան գնացի, յայտնեցի մեր դիտաւորութիւնն ու կատարվող պատրաստութիւնները:

Խրիմեանը Կուզկունյուկի եկեղեցումն էր ապրում, ուր եւ եղել էի մի տարի առաջ, այնպէս որ կարող էի միայնակ գնալ: Նրան գտայ իր փոքրիկ սենեակում երկու վեղարաւորների հետ, չը գիտեմ վարդապետներ էին թէ՞ եպիսկոպոսներ: Ինձ տեսնելուն պէս՝

—Հը, գենէ (դարձեալ) եկա՞ր. բարով ես եկեր,—ասաց նա, ձեռքս բռնելով:

Այս անգամ էլ նա իր գլխիցը շուտով ռադ արեց. մօտը գտնված կրօնաւորներին և, երբ միայնակ մնացինք,

—Սա ի՞նչ ըրիք, ի՞նչ սոսկալի աղէտ բերիք Կարնոյ գլխին,—դիմեց նա ինձ յանդիմանական ու չափազանց վըշտացած շեշտով:

—Ի՞նչ է պատահել, Հայրիկ, միթէ արդէն ընկճվել էք. բայց չէ՞ որ սա դեռ սկիզբն է,—պատասխանեցի անվեհեր եղանակով:

—Ի՞նչ... դեռ շատ մարդ պիտի կոտորէք: Կըսեն, որ 60—80 հայ է կոտորվել: Ապա ո՞ւր է. կըսէիր, թէ Եւրօպացիք պիտի միջամտեն...

Ես չէի կարողանում հասկանալ, թէ «Հայրիկը» իրօք այդ աստիճան միամիտ էր, թէ՞ կամենում էր միամիտ ձեւանալ:

—Ի՞նչ էք ասում, Հայրիկ, միթէ դուք ենթադրում էք

թէ Կարնում պատահած մի փոքրիկ ցոյցով Եւրօպացիք անմիջապէս պիտի միջամտէին ու Հայաստան ազատէին: Դեռ քանի՜-քանի այդպիսի ցոյցեր պիտի տեղի ունենան, քանի՜-քանի նահատակներ պիտի ընկնեն, մինչև որ Եւրօպացիները հաւատան, թէ հայերը յիրաւի որ ընդունակ են ազատութեան համար կռելու և զոհեր տալու: Դուք պիտի ուրախանաք ու փառաւորվէք, Հայրիկ, որ հայ ժողովուրդն էլ վերջապէս սովորում է իր արիւնը թափել:

—Դու կատարեալ խենթ ես, տղաս. ի՞նչպէս կրնայ Խայրիկն ուրախանալ իր զաւակներու մահը տեսնելով.—ասաց նա յանդիմանական ձայնով:

Եւ ապա, փոքրիկ լուծիւնից յետոյ, նա նորից սկսեց դիպլոմատիական աշխարհով հետաքրքրվել ու ինձ հարց ու փորձի ենթարկել այն մասին, թէ միթէ յիրաւի Անգլիան ու այլ մեծ պետութիւնները բոլորովին անտարբերութեամբ պիտի վերաբերվեն Կարնոյ կոտորածին ու չը պիտի զարթեցնեն հայկական հարցը:

—Առ այժմ դեռ ոչինչ չէ նկատվում,—ասացի,—բայց շուտով մենք կը ստիպենք Եւրօպային իր ուշադրութիւնը մեզ վրա դարձնելու: Ախր մենք պատրաստութիւններ ենք տեսնում այստեղ մի լաւ ցոյց անելու...

—Ինչ ըսի՞ր, ի՞նչ: Նորէն կուզէք բռնանորմիշ ընել (պղտորել): Հիմա կը հասկնամ, թէ ան մէկալ խենթերն ալ ինչու հոս եկած են: (Սօսքը Կաֆեանի և Մեղաւորեանի մասին էր): Անոնք ինձի բան մը չըսին: Պատմէ, նայիմ, ադ ի՞նչ կուզէք ընել:

Երբ բացատրեցի նրան մեր կատարելիք ցոյցի մօտաւորական ծրագիրը, առանց սակայն մանրամասնութիւնների մէջ մտնելու, որպէսզի կուսակցական դիսցիպլինայի հակառակ բան կատարած չը լինեմ, և երբ նա իմացաւ, որ ցոյցը խաղաղ բնաւորութիւն է կրելու, հետևապէս վախ չը կայ, թէ մարդկային զոհեր կարող են լինել,

—Ըրէք, ըրէք,—ասաց նա նորից կենդանացած ու զուարթացած:

Վայրկենսապէս նրա դէմքի արտայայտութիւնը փոխվեց, նրա աչքերը նորից վառվեցին, մտախոհութիւնը անցաւ, և ես նորից տեսայ այն ողբերկած Սրիմեանին, որ տեսել էի առաջին այցելութեանս ժամանակ: Նրան ոգևորողն ու զուարթացողը գլխաւորաբար այն միտքն էր, թէ վերջապէս, եւրօպացիք, մանաւանդ Անգլիան (այս վերջինի վրա նա ամենից աւելի մեծ յոյսեր ունէր), միջամտութիւն ցոյց կը տան, ու հայկական հարցը ցանկալի լուծում կը ստանայ: Հէնց այդ պատճառով էլ Սրիմեանը դարձեալ ու դարձեալ սկսեց իր սիրած գոշակութիւնները մոտմտալ, ինչպէս կը վերաբերվի Անգլիան, ինչ կասի ի սամարիլ, և այլն և այլն:

Այդ անգամ—1890 թ. ամառը—Պօլսում եղած ժամանակ ես այլ ևս Սրիմեանին չը տեսայ: Կատարվելիք ցոյցի պատրաստութիւնները, անվերջ ժողովներն ու վիճաբանութիւնները ոչ մի րօպէ ազատ չէին թողնում, որպէսզի հրաշարաւոր լինէր այցելութիւններ անելու: Բացի դրանից՝ ինչպէս վերեւում էլ յիշեցի՝ Պօլսի մասնաճիւղի վարչութեան մէջ մի փոքրիկ տրտունջ էլ կար Սրիմեանի դէմ. վարչութեան գանձապահը, ապահովութեան համար, իր մօտ կղած 30 ոսկու (մօտ 300 ռուբլի) գումարը յանձնել էր Սրիմեանին պահելու, իսկ մի քանի օրից, երբ նա գնացել էր փողերը յետ ստանալու, Սրիմեանը ասել էր, որ այդ փողերը ծախսել է, խեղճ վանեցի գաղթականների է տուել և չէ կարող այլ ևս վերադարձնել: Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ վարչութիւնը ցոյցը կազմակերպելու համար դրամի անաղին կարօտութիւն ունէր, իսկ դրամը հաւաքվում էր շատ մեծ դժուարութեամբ, Սրիմեանի այդ վարմունքը խիստ գրգռել էր թէ վարչութեան քանձապահին և թէ նրա մի քանի անդամներին: Գրգռել էր գլխաւորաբար հէնց այն տեսակէտով, որ «յեղափոխական» համարված Հայրիկը, գիտենալով հանդերձ որ իրան յանձնված գումարը յեղափոխական գործի համար հաւաքված մի գումար է, առանց երկար ու բարակ մտածելու, էլ չենք ասում՝ առանց դրամը յանձնողի կամքը

հարցնելու, վերցրել ու ինչ որ վանեցի գաղթականների էր տուել: Մասամբ էլ ընկերներիս այդ տրտունջը, ի նկատի առնելով էր որ ես զգուշանում էի Սրիմեանի մօտ գնալ, որպէսզի նրանց չը վշտացնեմ: Երբ ամառը անցավ, Սրիմեանին ես արդէն յայտնել էի, որ ցոյցը տեղի պիտի ունենայ յուլիսի 15-ին: Յուլիսի 15-ից երեք թէ չորս օր առաջ ինձ մօտ եկաւ Մամբրէ վարդապետը և յայտնեց, թէ Սրիմեանը մարդ էր ուղարկել ու կանչել էր իրան և խստիւ պնտուրիւր:

—Ամման, Մամբրէ վարդապետ, գիտեմ, դու կը ճանչնաս Սանազատը, Շմաւօնը ու Մեղաւորեանը: Գնա շուտ ատոնցմէ մէկն ու մէկը գտիր և ըսէ՝ այն, որ Սանազատը ինձի ըսաւ, թէ պիտի ընէր յուլիս 15-ին, թող չընեն: Կը հասկնամ. ըսէ, որ Հայրիկը կըսէ, որ չընէր:

—Այդ ինչ պիտի ընեն, Հայրիկ, —հարցրել էր Մամբրէն, միամիտ ձևանալով:

—Դու անոնց ըսէ, անոնք կը հասկնան, —պատասխանել էր Հայրիկը, կրկին եւ կրկին անգամ խնդրելով որ անպատճառ մեզից մէկն ու մէկին տեսնի և իր յանձնարարութիւնը կատարի:

Շատ պարզ էր խնդիրը. կատարվելիք ցոյցի օրը մօտեցած լինելով, Սրիմեանը սկսել էր նորից վախ զգալ, թէ մի գուցէ ասված խօսքերն ու վերացական ծրագիրները յանկարծ իրականութիւն ստանան ու հետեւանքը դարձեալ հայկական գոհեր լինեն և այն էլ, գուցէ, բոլորովին ապարդիւն գոհեր: Ես արդէն ըմբռնել էի Սրիմեանի հոգեբանութեւնը ու նրա «յեղափոխականութիւնը». նա յեղափոխականութիւնը սիրում էր գրքերի ու քարոզների մէջ. իսկ իրական ու կեանքի մէջ կատարված յեղափոխութիւնը, մանաւանդ երբ դա հայերին էր վերաբերում, նրան ուղղակի սոսկում էր պատճառում:

—Որպէսզի ծերունին չը վշտանայ, մտածելով թէ մենք իր խօսքին չենք լսում ու պատուէրները չենք կատարում, —ասացի Մամբրէ վարդապետին, —դու մինչև կիրակի (դա

ցոյցը կատարվելու օրն էր) մի անգամ գնա Հայրիկի մօտ և ասա, որ, ինչքան փնտռում ես, մեզնից և ոչ մէկին չես կարողանում գտնել: ասա, որ Շմաւօնը արդէն գնացել է Պօլսից (իրօք որ նա արդէն գնացել էր Սամսոն, այնտեղից Արաբկիւրի կողմերը անցնելու համար), իսկ ես ու Մեղաւորն էլ փոխել ենք բնակարաններս, և դու տեղներս չես գտնում: Իսկ ցոյցը կատարվելուց յետոյ էլ կը գնաս և կասես, որ մինչև ցոյցի օրը մեզ չը տեսար:

Մամբրէն հէնց այդպէս էլ արել էր: Իսկ Խրիմեանը ցոյցից մի օր առաջ հեռացել էր Պօլսից ու մի ինչ որ արուարձան էր գնացել և Պօլիս էր վերադարձել մի շաբաթից յետոյ միայն:

V

Հեռեւեալ տեսակցութիւնս Խրիմեանի հետ տեղի ունեցաւ 1891 թւականի գարնանը Երուսաղէմում, ուր նա աքսորված էր սուլթանի հրամանով, իսկ ես գնացել էի այդ աքսորավայրից նրան Եւրօպա տանելու:

Շատ հետաքրքրական է, ի հարկէ, պատմել, թէ ինչպէս և ինչ հանգամանքների մէջ ծնունդ առաւ Խրիմեանին Եւրօպա տանելու գաղափարը:

Անշուշտ յիշում են շատերը, որ 1890 թւականի յուլիսի 15-ին Պօլսում կատարված հայկական անդրանիկ ցոյցը մի անգամից ցնցեց ամբողջ հայութիւնը. ամբողջ հասարակութիւնը, նրա բոլոր խաւերը, դարաւոր քնից յանկարծակի արթնացածի նման, կատարեալ իրարանցումի. մէջ էին ընկել, ոգևորութիւնը ընդհանուր էր և ամենքն էլ ինքնաբերաբար այն եզրակացութեան էին եկել, որ անհրաժեշտ է սկսված յեղափոխական գործին ոյժ տալ և աւելի ընդարձակ ու ամուր հիմքերի վրա դնել նրան:

Այդ ցոյցից համարեա թէ անմիջապէս յետոյ ես Կովկաս եկայ և ուղղակի չէի ճանաչում ընդամենը մի տարի առաջ տեսածս հասարակութիւնն ու մանաւանդ երիտասար-

դութիւնը: Այն մարդիկ, որոնք դեռ 1889 թւականի ամառը կատարեալ դատարկութեամբ էին անցկացնում իրանց ժամանակը, որոնք համարեա թէ ամեն երեկոյ, հաւաքվելով սրա ու նրա բնակարանը, սպիրիտիզմով և անեկզոտներ ասելով էին զբաղվում, այժմ (1890 թ. ամառը) բուռն յեղափոխական հովերով բռնված, առաւօտից մինչև կէս գիշեր ժողովներ էին գումարում, ծրագրերներ մշակում, այս ու այն կողմը վազվզում, կազմակերպութիւններով զբաղվում:

Հէնց ճիշտ այդ ժողովների ու իրարանցումի արդիւնքն է արդի Հ. Յ. Դաշնակցութիւնը, որի հետ պիտի միանար և Հնչակեան կուսակցութիւնը, եթէ միայն կարելի լինէր վերջնական համաձայնութեան գալ ծրագրային ու կազմակերպչական հարցերի վերաբերեալ: Իսկ մինչև այդ վերջնական համաձայնութեան գալը, Հնչակեան կուսակցութեան կողմից բանակցութիւններ վարող ներկայացուցիչներս (Յ. Մեղաւորեան և ես) շատ սերտ ու մտերմական յարաբերութիւնների մէջ էինք գտնվում Դաշնակցութեան հիմնադիրների, մանաւանդ նրանցից մի քանիսի հետ և, հաւանաբար լինելով թէ համաձայնութիւնը անպատճառ կը կայանայ, ոչ մի խտրութիւն չէինք գնում մեր և նրանց մէջ:

Ինչպէս և պէտք էր սպասել, հայկական անդրանիկ յեղափոխական շարժումը սաստիկ ազդել ու ոգևորել էր և հանգուցեալ Գ. Արծրունուն, որը իր մի բարեկամ բժշկապետի հետ (սա դեռ կենդանի է) 2 թէ 3 հազար ըուրլի փող էր հաւաքել և, Դաշնակցութիւնը կազմակերպվելուց ու իմ Թիֆլիս գալուց դեռ առաջ, օգնել և ճանապարհ էր դրել Կուկունեանին ու Սարկաւազին իրանց խմբով դէպի «Հայաստան»:

Բայց ի՞նչ նշանակութիւն կարող էին ունենալ մի երկրի սկսվող յեղափոխութեան համար Կուկունեանի մի քանի տասնեակ մարդկանցից կազմված արշաւախումբը կամ մանաւանդ 2—3 հազար ըուրլիները. գործը հէնց սկզբից հաստատ ու ամուր հիմքերի վրա դնելու համար հարիւր

հաղարները ու միլիոնների կարիք կար: Բայց ով կը տար այդպիսի խոշոր գումարներ, ում կարող էին հաւատալ խոշոր գումարներ տուող մեր հարուստները: «Յեղափոխական գործի գլուխ կանգնածները բոլորն էլ անյայտ մարդիկ են. իսկ անուանի ու կատարելապէս վստահութիւն վայելող մարդիկ քաջվում են բացարձակապէս գործի գլուխ կանգնել ու իրանց հեղինակաւոր ձայնը բարձրացնել».—այսպէս էինք մտածում մենք այն ժամանակ և ամեն անգամ աչքներս դէպի Գ. Արծրունու կողմը դարձնում:

Ինչպէս յայտնի է, դրամական խնդիրների վերաբերեալ այն ժամանակներում ամենքից ու ամենամեծ վստահութիւն վայելող անձը Արծրունին էր. իւրաքանչիւր անգամ, երբ մի որեւէ աղէտի ժամանակ նա հանգանակութեան գլուխ էր կանգնել, հանգանակութիւնը ահագին արդիւնք էր տուել: Վերոյիշեալ թւականին էլ հարուստները շրջաններում միշտ խօսվում էր, որ եթէ Արծրունին գործի գլուխ անցնի, իբր թէ միլիոններ պիտի թափվէին: Բայց ինչպէս կարող էր Արծրունին, շարունակելով ապրել Թիֆլիսում, յեղափոխութեան գլուխ կանգնել և յեղափոխութեան համար դրամ հաւաքել:

Ահա հէնց այդ հարցի մասին մէկ անգամ հանդուցեալ Արծրունու հետ խօսելով իր բնակարանում, ես նրան ասացի, թէ որպիսի հրաշալի բան կը լինի, եթէ նա՝ Արծրունին Եւրօպա անցնի և ազատ ու համարձակ կերպով յեղափոխութեան գլուխ կանգնի:

—Եւ յիրաւի, պ. Արծրունի, եկէք այդպիսի մի յանգուզն քայլ արէք, և գիտէ՞ք թէ որպիսի մեծ նշանակութիւն կունենայ ձեր այդ քայլը յեղափոխական գործի համար,—ասացի նրան:

—Դուք չէք հասկանում, պ. Սանազատեան, թէ որպիսի ծանր առաջարկ էք ինձ անում,—ասաց նա.—այդ նոյնն է, եթէ դուք ինձ առաջարկէիք իմ հարազատ զաւակը իմ ձեռքով սպանել: Եւ միթէ «Մշակը» իմ զաւակը չէ. ինչպէս կարելի է այնպիսի դժուարութիւններով ու տանջանքներով

այսօրվան հասցրած «Մշակ» փակեմ և արտասահման գնամ: Բայց ինչո՞ւ այդպիսի առաջարկով դուք Սրիմեանին չէք գիմում,—աւելացրեց նա:—Այ, նա բոլորովին պարապ ու անգործ նստած է Երուսաղէմում (այդ ժամանակ—1890 թ. աշնանը—նոր էր ստացվել Սրիմեանին աքսոր ուղարկելու լուրը), թող գնայ Եւրօպա և թող գործ կատարի: Նա աւելի մեծ անուն ունի հայութեան մէջ և աւելի վստահութիւն է վայելում, քան ես:

—Բայց կը ցանկանայ արդեօք նա գնալ,—թերահաւատութեամբ հարցրի ես:

—Ախր ինչո՞ւ չը պիտի գնայ,—բարկացած շեշտով ասաց Արծրունին,—միթէ նրան աւելի հաճելի է Երուսաղէմում աքսորականի կեանք վարելը: Յատուկ պատգամաւորութիւն ուղարկէք, թող նրան համոզի: Եւ կամաց-կամաց սկսեցի լուրջ վերաբերվել այդ հարցին:

—Բայց դր աստիճան Սրիմեանը կարող է օգտակար լինել յեղափոխական գործին,—ասացի.—ճիշտ է, նա կարող է կոչեր արձակել, խոշոր գումարներ հաւաքել, ժողովրդին ոգևորել, բայց և միեւնոյն ժամանակ նա կարող է շատ բան խանգարել, ամեն խնդրի մէջ խառնվելով ու «այս բանը ըրէք, իսկ միւսը մի ընէք» ասելով:

Եւ ես նրան պատմեցի Մամբրէ վարդապետի միջոցով ցոյցից առաջ Սրիմեանի «ասա՛ թող չընեն»-ի մազալու պատմութիւնը, որը Արծրունուն մեծ զուարճութիւն պատճառեց:

—Այո, այդպիսի կողմեր շատ ունի Սրիմեանը,—ասաց Արծրունին մի լաւ ծիծաղելուց յետոյ:—Եղբայրս՝ Անդրէասը պատմում էր, թէ ինչպէս նա՝ Սրիմեանը Բերլինի վեհաժողովին գնացած ժամանակ, տեսնելով որ հայկական հարցը անմիջական լուծում չը ստացաւ, երեխայի նման խռովել էր թէ վեհաժողովին մասնակցող բոլոր դիպլոմատներէրից և թէ գերմանական կառավարութիւնից ու չէր ուզեցել գնալ թագաժառանգի՝ ի պատիւ վեհաժողովականների տը-

ւած ճաշկերոյթին: Եղբայրս ու Խրիմեանի հետ գնացած միւս հայ պատգամաւորները երկար բացատրութիւններէց յետոյ հազիւ են կարողանում նրան հասկացնել ու համոզել, որ գերմանական թագաժառանգը ոչ մի կապ չունի վեհա-
ժողովի հետ. որ նա, իբրեւ տանտէր, պարզապէս կամեցել է պատուել Բերլին եկած օտարազգի պատգամաւոր-հիւրե-
րին և ճաշկերոյթ է տալիս դրանց, հետևապէս հայ պատ-
գամաւորները, այդ հրաւերին չը գնալով, պարզապէս վի-
րաւորած կը լինեն գերմանական թագաժառանգին:

—Դէհ որ այդպէս է, ելէք երթանք,—ասել էր Խրի-
մեանը ու գնացել ճաշկերոյթին: Խրիմեանի լաւ կողմը հէնց
այն է,—շարունակեց Արծրունին,—որ նա շատ հասկացող
մարդ է և լաւ շրջապատողների ազդեցութեան տակ կա-
րող է շատ լաւ գործեր կատարել:

—Այդ պարագայում հէնց ես ինքս կը գնամ նրան
Երուսաղէմից տանելու,—ասացի ես վճռական ձայնով,—
նամանաւանդ, որ նա ինձ արդէն ճանաչում է և աւելի վըս-
տահութեամբ կը վերաբերվի:

Հէնց երկրորդ օրը ես այդ միտքը յայտնեցի և հան-
գուցեալ Բրիտանացի Միքայէլեանին, որը նոյնպէս շատ
հաւանեց և խոստացաւ ինձ համար ճանապարհածախս գըտ-
նել:

1890 թւականի գեկտեմբերի 30-ն էր, որ ես Թիֆ-
լիսից ճանապարհ ընկայ Խրիմեանին Երուսաղէմից Եւրօպա
փախցնելու դիտաւորութեամբ:

VІ

Թիֆլիսից Երուսաղէմ գնալու ամենակարճ ու յարմար
ճանապարհը, ի հարկէ, Բաթումից նաւով գնալն է: Բայց
ինձ համար անկարելի էր այդ ճանապարհով գնալ, որով-
հետեւ խիստ կերպով փնտռվում էի ոչ միայն թիւրք, այլ
և մեր կառավարութեան կողմից: Մի ամիս առաջ հազիւ էի
Բաթումից օձիքս փախցրել և Թիֆլիս եկել, իսկ այստեղ

էլ ստիպւած էի գիշերները միայն դուրս գալ տանից, և
հէնց այդ պատճառով էլ հանգուցեալ տիկին Արծրունին ինձ
կատակով չղջիկ էր անուանում:

Որոշվեց, որ պիտի գնամ Վլադիկավկազ-Նօփօսիյսկ-
Օդեսսա, ապա պիտի անցնէի Բօլգարիա և այնտեղից էլ
յարմարագոյն ճանապարհով պիտի գնայի Երուսաղէմ:
Վլադիկավկազում մի քանի օր պիտի սպասէի ծնող-
ներին մօտ (սրանք այնտեղ էին բնակվում) Հ. Խուշաբուհանի
դալուն, որը՝ Տրապիզօնից փախստական՝ նոյնպէս գտնվում
էր Թիֆլիսում և որը Բօլգարիայի վրայով պիտի գնար Պօ-
լիս մտնելու:

Մենք հէնց այդպէս էլ արեցինք. Օդեսսայում մեր ան-
ցագրերը կարգի բերելուց յետոյ ցամաքային ճանապարհով
Բուժանայի վրայով անցանք Բօլգարիա: Սակայն Բօլգա-
րիայից այն կողմ մեր մարշրուտը փոխվեց. մենք պարտա-
ւորված էինք ժընէվ գնալու, ուր մեր ընկերները՝ հնչա-
կեաններ՝ ստիպողաբար կանչում էին մեզ մի քանի կարևոր
խնդիրների մասին խորհրդակցելու և մանաւանդ Դաշնակցու-
թեան հետ միանալու մասին մի քանի խոշոր թիւրք-
մացութիւններ պարզելու համար:

Միջանկեալ ասեմ, որ մեր ժընէվ գնալուց յետոյ վերջ-
նականապէս պարզվեց, որ «միութիւնը» ոչ մի կերպ չէ
կարող տեղի ունենալ: Ժընէվում իմացանք նոյնպէս, որ
այդտեղի մեր ընկերների մէջ էլ Խրիմեանին Եւրօպա տա-
նելու միտքն է յղացել և արդէն մտածելիս են եղել մի յա-
տուկ մարդ ուղարկել այդ նպատակով Երուսաղէմ:

Մենք այդտեղ ամենից առաջ մանրամասն քննու-
թեան առանք այն հարցը, թէ ինչպէս և ինչ ձևով
մենք պիտի կարողանանք օգտվել Խրիմեանից: Մենք, ի
հարկէ, Խրիմեանի վրա չէինք նայում իբրեւ մի յեղափոխա-
կանի վրա, որը կարողանար ղեկավարել ու տոն տալ մեր
գործունէութեանը. այդ արդէն չափազանց ծիծաղելի կը լի-
նէր: Բայց մենք հաւատացած էինք, որ նա, Հայաստանի
ազատութեան չափազանց մեծ ջատագովը լինելով և իբրեւ

«երկաթէ շերեփի» հեղինակ, կը համակրէ մեր գործունէութեանը և սիրով կընդունի իր հեղինակաւոր աջակցութիւնը ցոյց տալ մեզ: Ճիշտ է, դէպի կում-Գափուի ցոյցը խրամեանի ունեցած վերաբերմունքից և իմ ստացած պաւլու-րութիւններէ, ինչպէս նախորդ գլուխներէ մէկում էլ ասացի, արդէն պարզ էր, որ խրամեանը «երկաթէ շերեփիներ» սիրում էր լոկ քարոզներէ մէջ, իսկ իրապէս նա սուկում էր մարդկային զոհերից, բայց մենք միևնոյն ժամանակ մտածում էինք, թէ դա լոկ մի թիւրիմացութիւն է, որ կարելի է նրան բացատրել ու համոզել, թէ Հայաստանի ազատութեան համար ոչ մի այլ ճանապարհ չը կայ, և շարունակ մեր ազդեցութեան տակ գտնվելով, նա կեանքի յիշած փոխական կը դառնայ:

Ել ինչեր ասես որ չէինք մտածում ու երազում այն ժամանակ. բայց չէ որ երիտասարդական հասակն էլ հէնց նրա համար է, որ մարդիկ երազեն... Մեծամիտ մարդիկ միայն ամաչում են իրանց երիտասարդական երազների մասին խոստովանել և աշխատում են ձեռնալ, թէ իրանք երիտասարդական հասակում էլ նոյնն են եղել ու նոյնը մտածել, ինչ և 40—50 տարեկան հասակում: Բայց մենք այն ժամանակ այն աստիճան ոգևորված էինք, որ մինչև իսկ հաւատում էինք, թէ 70 տարեկան խրամեանին պիտի կարողանանք մեր ազդեցութեան տակ մինչև իսկ սօցիալիստ դարձնել (!):

Այդ բոլոր հանգամանքները քննելուց յետոյ, մենք մտաւորապէս ծրագրեցինք այն, թէ ինչպէս և ինչ ձևով ես պիտի հեռացնեմ խրամեանին Երուսաղէմից, եթէ նա, ի հարկէ, հաճութիւն տար:

Պիտի երթայի նախ Եգիպտոս՝ Ալէքսանդրիա: Պօլսի մեր ընկերներից մէկը, ցոյցից յետոյ փախելով, ամիսներից ի վեր այդտեղ էր գտնվում արդէն և հնչակեան մասնաճիւղ էլ էր կազմել: Այդ ընկերոջ միջոցով մի կամ երկու ճարտար, տեղական պայմաններին ու լեզուներին ծանօթ օգնականներ պիտի գտնէի և պիտի պայմանաւորվէինք, որ, երբ ես միայնակ Երուսաղէմ գնամ, խրամեանի համաձայ-

նութիւնը ստանում ու պայմանաւորված բառը հեռագրեմ, նրանք գան Եաֆֆա կամ Երուսաղէմ և մնացածը կարգադրենք:

Այդ ծրագրով էլ ես Սուշպուլեանի հետ ճանապարհ ընկայ ժընէվից դէպի Մարսէյ. Սուշպուլեանը նաևով պիտի գնար Պօլսի «գործելու», իսկ մի այլ նաևով ես պիտի անցնէի Ալէքսանդրիա:

1891 թւականի մայիսի մէկն էր ըստ եւրօպականի, երբ Սուշպուլեանի հետ Մարսէյ հասանք: Պօլսի գնացող նաևը մէկ օր առաջ էր ճանապարհ ընկնելու, այնպէս որ ընկերոջս ճանապարհ գցելուց յետոյ միայն ես ուղևորվեցի դէպի Ալէքսանդրիա:

Ինչպէս որ ընկերներիս հետ ծրագրել էինք ժընէվում, հէնց այնպէս էլ արեցի. պէտք եղածը պայմանաւորվեցինք, և մի քանի օր յետոյ ճանապարհ ընկայ դէպի Եաֆֆա, իսկ այնտեղից էլ կառքով (երկաթուղին դեռ չինված չէր) Երուսաղէմ: Հետո ոչ մի բազաժ չէի վերցրել. պայուսակս թողել էի Ալէքսանդրիա, իսկ հետո վերցրել էի միայն մի ճանապարհորդական վերմակ և մի ֆրանսերէն վէպ, ճանապարհին կարդալու համար:

Բայց ինչ կարդալ. միթէ կարելի է մի այդպիսի կօնսպիրատիւ ու բիսկ պահանջող գործի համար գնալու ժամանակ կարդալ և բան հասկանալ: Այժմ անցնում էին տողերի վրայով, նկատում էի, որ գրքի երեսը վերջացաւ, բայց ոչինչ չէի հասկացել, ոչինչ չէր մտել գլուխս: Եաֆֆա հասնելուց յետոյ արդէն գիրքը ծալել, մի կողմ էի դրել: Մանրամասն գնում էի քաղաքը, ծանօթանում էի նրա ոլորմոլոր փողոցներին, դիտում էի նաւահանգստի դիրքը, այնտեղից նաւ գնալու (նաւերը նաւահանգստից բաւական հեռու են կանգնում) ճանապարհներն ու տեղերը. մի խօսքով՝ պատերազմական հետախուզութիւններ էի կատարում:

Ի հարկէ բոլորովին անհրաժեշտութիւն չը կար, որ մենք անպատճառ Եաֆֆայի նաւահանգստով փախցնէինք մեր կենդանի աւարը, և կամ թէ, Երուսաղէմից դուրս գա-

լուն պէս, մենք անմիջապէս փախուստի մասին մտածէինք: Դա, ի հարկէ, շատ մեծ անփորձութիւն կը լինէր մեր կողմից, որովհետեւ աքսորականը անհետանալուն պէս կառավարութիւնը ամենից առաջ ետֆֆայում և ետֆֆայից դուրս գնացող նաւերի մէջ պիտի փնտռէր նրան: Հէնց այդ պատճառով էլ աւելի նպատակայարմար էինք համարում, Երուսաղէմից հեռանալով, առաջին անգամ ցամաքի ճանապարհով մի այլ թէկուզ բոլորովին հակառակ կողմը գնալ, ծրարեալ կերպով ապրել նախօրօք պատրաստված տեղերում և ապա՝ մի քանի ժամանակ անցնելուց յետոյ միայն ճանապարհ ընկնել դէպի նաւահանգիստ՝ Ետֆֆա կամ մի աւելի յարմար ծովագերեայ տեղ:

Ունէինք և մի այլ ծրագիր, այն է՝ Թիւրքիայի ափերից հեռանալ մինչև Պօրտ-Սայիդ ոչ թէ շոգենաւով, այլ մի յատուկ առանձնապէս վարձված առագաստանաւով:

Սրանք, ի հարկէ, ծրագիրներ էին միայն, իսկ վերջնական որոշում պիտի անէինք, երբ օգնականս գար Եգիպտոսից և աւելի մանրագնին հետախուզութիւններ կատարէինք: Իսկ օգնականս էլ պիտի գար, ինչպէս ասացի, այն ժամանակ միայն, երբ Խրիմեանից մեզ հետ փախչելու հաճութիւն կը ստանայի ու կը հեռագրէի նրան:

Մինչև Երուսաղէմ հասնելս ու Խրիմեանի հետ տեսնվելս կար և մի այլ չափազանց կարեւոր հանգամանք, որ թէ ինձ և թէ ինձ ուղարկող ընկերներս համար դեռ ես շատ մոլեթն էր և պակաս մտահոգութիւն չէր պատճառում ինձ, այդ այն էր, որ մենք չը գիտէինք, թէ ինչպիսի պայմանների մէջ է պահվում Խրիմեանը Երուսաղէմում: Նա աքսորական էր. բայց չէ՞ որ զանազան կարգի աքսորականներ են լինում: Կան աքսորականներ, որոնք շատ աւելի խիստ պայմանների ու հսկողութեան տակ են պահվում, քան միւսները: Արդ՝ որ աստիճան խիստ է Խրիմեանի վրա եղած հսկողութիւնը. թոյլատրվում է արդեօք նրան վանքի պարիսպներից միայնակ դուրս գալու և քաղաքում շրջագայելու: Թոյլատրվում է արդեօք նրան ուխտաւորների և կամ

այլ կողմնակի մարդկանց հետ առանձին տեսնվելու ու խօսելու: Շրջապատված չէ՞ արդեօք նա հայ և թիւրք լրտեսներով: Պիտի կարողանամ արդեօք նրա հետ գէթ կարճ ժամանակով տեսնվել ու իմ Երուսաղէմ դալու նպատակը յայտնել: Իսկ եթէ նա իմ առաջարկութիւնը ընդունի, ի՞նչ ձևով և ի՞նչ եղանակով կարելի պիտի լինի նրան վանքի պարիսպներից դուրս հանել: Արդեօք հնարաւորութիւն կայ գիշեր ժամանակ վանքի դռները բանալ տալ: Կարելի պիտի լինի՞ արդեօք դռնապանին կաշառել: Կը համաձայնի՞ արդեօք Խրիմեանը ծալովել, հրէական հագուստ հագնել կամ թէ, հարկ եղած դէպքում մորուքը խուզել:

Ահա հարցերի անվերջ շարաններ, որոնք խոնվում էին ուղեղումս Ետֆֆայից Երուսաղէմ տանող 10—12 ժամվայ ամբողջ ճանապարհի ընթացքում և, ի հարկէ, առանց պատասխանի մնում:

Մի հանգամանք միայն ինձ մեծ յոյսեր էր տալիս այդ բոլոր դժուարութիւնները յաղթելու. այդ այն էր, որ ինձ Ալէքսանդրիայում ասել էին, թէ Խրիմեանի մօտ կայ մի շատ վստահելի և Խրիմեանին չափազանց հաւատարիմ վանեցի երիտասարդ (անունը մոռացել եմ), որը երկար ժամանակ սպասաւորութիւն է արել Խրիմեանի մօտ և, սրան Երուսաղէմ ճանապարհ գնելուց յետոյ, ինքն էլ գնացել էր նրա ետեւից և այժմ էլ նրա մօտ է ապրում: Ահա հէնց այդ երիտասարդն էր, որի վրա ես մեծ յոյսեր ունէի և որին, ենթադրված դժուարութիւնների դէպքում, իմ առաջին օգնականը պիտի ընտրէի և նախնական բանակցութիւններս Խրիմեանի հետ նրա միջոցով պիտի կատարէի:

Բանը նրանումն է, որ ես շատ էլ չէի կասկածում, թէ Խրիմեանը պիտի ընդունի առաջարկս, ուստի մի հաւատարիմ ու վստահելի միջնորդի միջոցով նրա հետ բանակցելս էլ բաւական էի համարում:

Այս բոլորից զատ՝ ճանապարհին ես մտածում էի և այն մասին, թէ ինչպէս ես ինքս վանականների մօտ պիտի ներկայանամ իբրև մի հաւատացեալ հայ-քրիստոնեայ, որը

ջերմեռանգութիւնից դրդված պարզապէս ուխտ է եկել: Բայց ցաւը նրանումն էր, որ Չատիկը արդէն անցել էր, իսկ Երուսաղէմի ուխտաւորները զխաւորաբար Չատիկից առաջ են գալիս, որպէսզի գատիական տօներին այնտեղ դնուին: Ճանապարհին արդէն տեսնում էի, թէ ինչպէս ուխտաւորները շարան-շարան էշերով ու ձիերով վերադառնում էին Երուսաղէմից, միմեանց «հաջի» ու «մահտեսի» անուանելով: Հարսանեաց հանդէսին ուշացած կոյսերի նման ծիծաղի առարկայ չը դառնալու համար, որոշեցի ասել, որ ես ուխտաւոր չեմ իսկական: Իմաստով, գալիս եմ Եւրօպայից, ուր գնացել էի բժշկվելու, և վերադառնում եմ Օդեսսա, ուր առևտրական գործեր ունեմ: Իսկ որովհետև նաւը Եւֆրատով էր անցնում, մտածեցի գալ մեր պապենական սըրբավայրերը տեսնել: Ինքս էլ բնիկ պարսկաստանցի եմ՝ թաւրիզեցի, և անունս է Նշան Կարապետեան (հէնց այդպիսի էլ անցագիր ունէի):

Իսկական ուխտաւոր չը ձեանալս ինձ մի ուրիշ բանից էլ ազատում էր. Ալէքսանդրիայում ինձ արդէն ասել էին, որ մեր սուրբ հայրերը իսկական ուխտաւորներին աւելի շատ են խուզում, քան պատահական հիւրերին:

Երեկոյեան ժամը 9-ն էր, որ Երուսաղէմ հասայ և սուրբ Յակոբայ վանքի դռանը իջայ:

VII

Չը նայելով որ ճրագները դեռ նոր էին վառվել, բայց վանքի բակի դուռը—մի մեծ դարվաղա—արդէն փակ էր: Այդ բանը հէնց առաջին անգամից ինձ վրա շատ ճնշող տպււնութիւն թողեց: Կառապանին ճանապարհ գցելուց և մի-երկու քալէ կանգնած այս ու այն կողմ նայելուց յետոյ, դուռը զարկեցի մի քանի անգամ:

—Ո՞վ է,—ձայն տուեց մի խուպոտ ու անդուր ձայն, հեռու ներսից:

—Ուխտաւոր եմ, բաց արա:

—Սապէս ուշ ուխտաւոր ներս չենք առնէր,—պատասխանեց նոյն ձայնը:

—Ի՞նչպէս թէ ուշ. դեռ ժամի 9-ն է. փողոցում խօմ չեմ մնայ, քաղաքին անձանօթ եմ:

Չայնը չը պատասխանեց, բայց դուռն էլ իսկոյն չը բացվեց: Հասկացայ, որ մարդը տատանվում է: «Կատարեալ միջնաբերդ է», մտածեցի և կրկին անգամ զարկեցի դուռը, կրկնելով՝ որ բաց անեն: Այդ ժամանակ դռան ետեւից մի կրկնելով՝ որ բաց անեն: Այդ ժամանակ դռան ետեւից մի աղօտ ճրագի լոյս երևաց և լսեցի, թէ ինչպէս մարդը մօտենում է դռանը փնթփնթալով: Վերջապէս դուռը բացվեց, և տեսայ ինձ հետ խօսողին. դա մի չափազանց հաստ ու կարճ, ֆէսը գլխին ծառայ էր, որը կատարեալ մի բազմամեայ ծառի քեթիկ էր ներկայացնում իրանից: Դուռը բանալուն պէս նա ինձ ողջունեց «բարի եկար, հաջի-աղա» խօսքերով: Այդ «հաջի-աղա» անգամը ոչ նուազ ծանր կերպով-աղբից, քան ազգել էր վանքի այդ աստիճան անմատչելի լինելը. բայց ի՞նչ արած, քանի որ ուխտաւոր էի ներկայացել, պէտք էր և այդ անգամը վայելէի: Կարճես թէ իրրև հատուցումն, նոյն անգամնով էլ ես նրան բարեւելի և խնդրեցի ինձ մի կացարան տալ: Նա ինձ առաջ-նորդեց մի սենեակ, տուեց ինձ մի կտոր մօմ վառելու համար և ինքը հեռացաւ:

Սենեակը երկրորդ յարկումն էր, առաստաղը կամարապատ և այնչափ ցածր էր, որ կարճահասակ լինելով հանդերձ գլուխս կաշում էր: Բայց այդ դեռ ոչինչ. յատակը պարզ գետին էր՝ հողով ծածկված և կիսով չափ միայն խսիր փոված: Վերմակս փռեցի այդ խսիրի վրա, պիջակս ծալեցի, բարձ շինեցի և այնպէս թիկն ընկայ նրա վրա:

Մի քանի քալէ հազիւ անցած, ծառան նորից վերադարձաւ, հետը բերելով մի կտոր հաց և պանիր, առանց ափսէի, և մի կաւէ ամանով ջուր:

—Ներողամիտ եղիր, հաջի-աղա,—ասաց նա, հաց ու պանիրը առաջս դնելով,—ժամանակի ուշ ըլլալուն համար

ուրիշ բան չունինք. առտուն քեզի կը տանեմ սեղանատունը ճաշելու:

Շնորհակալութիւն յայտնեցի և նա գնաց, իսկ ես ետեւից դուռը կողպեցի և սկսեցի պատահանից դիտել, հասկանալու համար, թէ արդեօք ի՞նչ է ներկայացնում իրանից միջնաբերդը: Թէև լուսնեակ գիշեր էր, բայց ոչինչ որոշ չէր կարելի նկատել. երևում էր միայն մի ընդարձակ բակ, շքուղատուած ափսոսանքի երկյարկանի խուցերով, ինչպիսին իմն էր, բայց և ոչ մի տեղ ձրագի լոյս չէր երևում: Չէր լսվում նոյնպէս և ոչ մի ձայն. կեանքը արդէն կանգ էր առել և ամեն ինչ թաղվել էր լուսնեակի ու խաւարի մէջ:

Նորից թիկն ընկայ վերմակիս վրա և փորձեցի ձեռքիս գիւղը կարգաւ. սակայն, նորից ոչինչ չէի հասկանում. հազար ու մի տեսակ մտածումներ խոնվում էին գլխումս, ուղեղս շարունակ դադարւած էր միշտ և միևնույն առարկայով: «Երուսաղէմումն եմ արդէն—ասում էի ինքս ինձ,—Երուսաղէմը դեռ չը տեսած, հաջի-աղա տիտղոսին էլ արժանացայ. բայց պիտի աջողվի արդեօք ինձ կատարել այն միսսիան, որի համար Երուսաղէմ եմ եկել: Որչափ էլ անմատչելի լինի այս միջնաբերդը, մենք հնարը կը գտնենք այստեղից ապահովութեամբ դուրս գալու, միայն թէ «Հայրիկը» ընդունի մեր առաջարկը և հաճութիւն տայ փախչելու: Բայց ինչո՞ւ պիտի նա չընդունի, ի՞նչը կարող է նրան արգելել. էլ ի՞նչպէս նա ժողովրդի հայրիկն է, որ ժողովրդի ազատութիւնը ամեն բանից վեր չը պիտի դասի և այդ ազատութեան համար ամեն տեսակ զոհողութիւն յանձն չը պիտի առնի: Բայց ի՞նչ զոհողութեան հարց կարող է լինել,—չաբունակում էի ինքս ինձ պատասխանելով,—է՞ որ ինքն էլ այս բոլորիս արքայական է և ազատութիւնից զրկված. ի՞նչպէս նա չը պիտի ցանկանայ հէնց իր այս գրութիւնից ազատվել և իր կեանքի վերջին մի քանի տարիները ազատութեան մէջ անցկացնել: Չէ, նա անպատճառ կընդունի առաջարկս, միայն թէ կարողանամ նրան շուտով տեսնել և խօսել ինչ-որ հարկն է: Ամենից առաջ պէտք է այս քեօ-

թուկ ծառայի հետ բարեկամանալ ու նրա միջոցով գտնել Հայրիկի սպասաւորին, իսկ այնուհետև ամեն ինչ կը հեշտանայ»:

Նախորդ գիշերները նաւի վրա չէի կարողացել լաւ քնել, աշխատում էի, գոնէ, այստեղ մի քիչ քնել ու կադդուրվել, բայց անկարելի էր. քունը աչքերիցս փախել էր: Ծառայի տուած մոմը վաղուց արդէն վառվել վերջացել էր, իսկ ես դեռ շարունակում էի մնալ պառկած, աչքերս բաց:

Լուսաբացին վանքի զանգերը խփեցին և քիչ յետոյ կեանքը սկսեց զարթնել. ոտքերի ձայներ լսեցի: Լուսամուտից նայեցի և տեսայ, որ մի խումբ երիտասարդ սարկաւազներ, դոյզ-դոյզ կանգնած, եկեղեցի են գնում: Վերջը իմացայ, որ դրանք ժառանգաւորաց դպրոցի սաներն էին: Ծիշտ այդ ժամանակ ծառան եկաւ և դրան ևտեից ինձ էլ եկեղեցի հրաւիրեց.

—Հաջի-աղա, ժամը սկսված է, ել, ժամ եկ,—կանչեց նա իր անդուր ձայնով:

—Հիմա կը գամ,—ասացի, բայց նորից վայր ընկայ վերմակիս վրա. այժմ արդէն քունս տանում էր և սաստիկ յոգնածութիւն էի զգում:

Բայց ծառան չը թողեց ինձ երկար քնելու. հագիւ կէս ժամ անցած, նա նորից դուռս թակեց, ասելով այս անգամ, որ հիւրընկալ սրբազանը ինձ սպասում է: Ծար չը կար. վերկացայ, երեսիս սառը ջուր քսեցի և դուրս եկայ:

Յիրաւի որ ինձ սպասում էին հիւրընկալ «սրբազանը» և մի ծերունի վարդապետ: Սրանք, ինձ հետ սիրալիր բարեկեց յետոյ, հրաւիրեցին այն սենեակը, ուր ամեն մի ուխտաւորի առաջին անգամ ընդունում և խուցելու առաջին արարողութիւնն են կատարում: Այդտեղ ինձ կրկին անգամ բարի գալուստ մաղթելով և ցանկութիւն յայտնելով, որ ուխտս ընդունելի լինի, հիւրընկալ «սրբազանը» պատուիրեց, որ ինձ համար սուրճ բերին (տաճկական փոքրիկ գաւաթով), և ապա սկսեց ինձ մանրամասն հարց ու փորձի ենթարկել. ո՞վ եմ, հրետեղացի եմ, ի՞նչ գործով եմ պարա-

պում, թրտեղից եմ գալիս, ի՞նչ հարազատներ ունեմ, առաջին անգամն է արդեօք երուսաղէմ ուխտի գալս, և այլն և այլն: Ես էլ, ի հարկէ, տալիս էի նրան իմ այդ բոլոր հարցերի համար նախօրօք պատրաստած պատասխանները: Այդ նախնական քննութիւնը կատարելուց յետոյ, հիւրընկալը ինձ համար բոլորովին աննկատելի կերպով, շատ հեռուից սկսելով, խօսակցութիւնը դարձրեց երուսաղէմի սրբաւայրերի, հայերի այդտեղ ունեցած իրաւունքների մասին, աշխատելով բացատրել ու համոզել ինձ, թէ «նրալիսի «մեծ նշանակութիւն» են ունեցել և ունեն նրանք «հայ ազգի» համար, թէ ի՞նչ աստիճան կարևոր է, որ այդ իրաւունքները պահպանվին հայերի ձեռքում, թէ ինչպիսի նեղութիւններ ու հալածանքներ են կրում երուսաղէմի վանականները այդ իրաւունքները անխախտ պահպանելու համար, հետևապէս, թէ ի՞նչ աստիճան հայ ազգը երախտապարտ պիտի լինի այդ սուրբ հայրերին ու գիշեր-ցերեկ դրանց նիւթական ապահովութեան մասին պիտի մտածի:

Իսկոյն երևում էր, որ հիւրընկալ «սրբազանը» իր այդ ճառը շատ ու շատ անգամներ էր կրկնել միամիտ ու ազէտ ուխտաւորների առաջ և, անշուշտ, լաւ արդիւնքներ ստացել: Ի հարկէ, ես չը հակաճառեցի նրան. ընդհակառակը՝ աշխատում էի ամեն կերպ համերաշխ ձեանալ փորը ուռեցրած, բայց և նիւթական կարօտութեան մասին ճառող եպիսկոպոսի բոլոր ասածներին: Այդպէս ամեն բանի մէջ համաձայնելուս նշաններից, ինչպէս երևաց, սուրբ հայրերը ենթադրել էին, թէ ես ոչ միայն գրպանիս բոլոր փողերը իրանց առաջը պիտի թափեմ իսկոյն, այլ և հազուստներս էլ պիտի իրանց տամ, բացականչելով՝

«Առէք, վերցրէք այս բոլորը, սրբազան հայրեր, և փոքր ինչ թեթեւացրէք ձեր տառապանքներով ու հալածանքներով ի կեանքը»:

Սակայն նրանք չափազանց զարմացան ու աչքները լալն բաց արին, երբ ես նրանց առաջ միայն 3 ֆրանսիական ոսկի դրեցի (մօտաւորապէս 22 բուլլի): Շատ աշխա-

տեցին, որ այդ գումարը աւելացնեմ, բայց հրաժարվեցի, ասելով որ երուսաղէմ գալս պատահական եղաւ, մօտս փող չէ մնացել և այլն: Տեսնելով որ ինձնից ոչինչ աւելի չէ դուրս գալիս, այնուամենայնիւ նրանք ինձնից խօսք վերցրին, որ մի ուրիշ անգամ էլ գամ երուսաղէմ:

—Եթէ ես չը գամ, ասացի, եղբայրներիս անպատճառ կուղարկեմ: (Եղբայրներ ես երբէք չեմ ունեցել):

—Անոնց օձիբը 3 ոսկիով թող չենք տար,—ասաց հիւրընկալի օգնականը ծիծաղելով, իմ այդ խոստումից խիստ ուրախացած:

Սրբաւայրերի վարձը (իրանց լեզուով դարբաս) կանխիկ ստանալուց յետոյ, սուրբ հայրերը ինձ բացատրեցին, թէ թրտեղ, երբ և ի՞նչ կարգով պէտք է գնալ երկրպագութիւն անելու: Այդ առաջին օրվայ համար ինձ յանձնարարեցին օղաբաշու (վերոյիշեալ ծառան) առաջնորդութեամբ սուրբ Յակոբի վանքի պարիսպների մէջ գտնվող սրբաւայրերը այցելել, իսկ յաջորդ օրերը տակաւ առ տակաւ միւս տեղերը գնալ: Ես ուրախացայ, որ ամբողջ օրը օղաբաշու հետ եմ լինելու, հետևապէս և նրանից կը կարողանամ մի քանի նախնական տեղեկութիւններ դուրս կորզել Խրիմեանի մասին: Հիւրընկալը կանչեց օղաբաշուն, պէտք եղած պատուէրները տուեց, և ես, հրաժեշտ տալով սուրբ հայրերին, գնացի իմ չիչերօնէի հետ ուխտատեղերը այցելելու:

Ինձ պէտք եղած տեղեկութիւնները օղաբաշուց ես ստացայ շատ աւելի շուտ ու հեշտութեամբ, քան մտածում էի: Մի սրբատեղից միւսը գնալու ժամանակ, միանգամայն երուսաղէմի մասին տգէտ ձեանալով, ես սկսեցի նրանից զանազան, բոլորովին անմեղ բնաւորութիւն կրող տեղեկութիւններ հարցնել. ի միջի այլոց՝ թի է պատրիարքը, ի՞նչ ակնանաւոր եպիսկոպոսներ կան և այլն: Եւ նա իր տուած տեղեկութիւնների մէջ յիշեց և Խրիմեանի անունը:

—Միթէ հայրիկը այստեղ է,—զարմացմամբ հարցրի:

—Այո, քանի մը ամիսէ ի վեր հոս կը գտնվի, կառավարութիւնը խրկած է: Կը ճանչնաս զինքը:

—Ոչ, անձամբ չեմ ճանաչում, բայց կուզենայի տեսնել և աչք առնել:

—Ինչու չէ, երկուսն ալ կրնաս տեսնել: Պատրիարքը պատրիարքարանն է, Խրիմեան սրբազանի սենեակն ալ քեզի կը ցուցնեմ ճաշարան երթալիս:

Հրճուանքիս չափ ու սահման չը կար. այլևս ամբողջ ուշը ու միտքս այն մասին էր, թէ Թրք պիտի ճաշարան գնանք: Այդ էլ երկար չը տևեց, որովհետև արդէն ժամը 12-ին մօտ էր (այդ ժամին են այնտեղ ճաշում): Միմիայն ճաշարան գնալու մասին մտածելով հանգերձ, ես աշխատում էի ամեն կերպ ուշադրութեամբ լսել, թէ ինչպէս օգտաւոր ռզնդութեամբ ինձ դանազան առասպելական բացատրութիւններ էր տալիս այս ու այն քարի ու ծառի պատմական ու կրօնական մեծ նշանակութեան մասին: Նա իր այդ պատմութիւնները շարունակում էր և այն ժամանակ, երբ մենք արդէն վերադարձել ու ճաշարան էինք գնում: Ես վախեցում էի, թէ մի գուցէ ոգևորված չիչերօ՛ն էս յանկարծ մոռանայ Խրիմեանի սենեակը ինձ ցոյց տալ: Յիշեցնել այդ մասին նրան ես զգուշանում էի: Այդ մտահոգութեանս միջոցին յանկարծ նա կանգ առաւ մի խուցի առաջ և, իր պատմութիւնը ընդհատելով,

—Խրիմեան Հայրիկը հոս կը կենայ,—ասաց ինձ անտարբեր ձայնով և շարունակեց իր ընդհատված պատմութիւնը:

Ես էլ անտարբեր ձեացայ. մի գննողական հայեացք գցեցի խուցի վրա, որ տեղը չը մոռանամ, և շարունակեցի նրա պատմութիւնը լսել ձեանալ: Ծաշարանում ես համարեալ թէ ոչինչ չը կերայ. ախորժակս կապկպ էր և եղած ճաշն էլ մի բանի նման չէր: Շտապեցի շուտ վերջացնել և վերադարձիս մտայ Խրիմեանի մօտ:

VIII

Խրիմեան Հայրիկի խուցը միմեանց մէջ մտնող երկու սենեակներից էր բաղկացած: Առաջին սենեակում, որ կարող էր նախասենեակի տեղ ծառայել, ապրում էին նրա «փոքրաւորը»—մի բարձրահասակ ու նիհար կազմուածքով երիտասարդ սարկաւագ—և այն վանեցի սպասաւորը, որի մասին ինձ ասել էին Ալեքսանդրիայում: Ներս մտածս միջոցին այնտեղ միայն սարկաւագն էր:

—Հայրիկը այստեղ է,—հարցրի նրան և, առանց ներս մտնելու համար թոյլտուութիւն խնդրելու կամ հրաւերի սպասելու, ուղղակի մտայ ներսի սենեակը:

Խրիմեանը իր սովորական ձևով նստած էր երկար թախտի մի ծայրում գցված փոքրիկ մինդարի վրա, առջևում նոյն հաստ մուշտուկների խուրձն ու թութուշնամանը, ծխում էր և իր առջևում կանգնած մի ինչ-որ պարոնի հետ խօսում էր:

—Բարե, Հայրիկ,—ասացի ներս մտնելուս պէս և ձեռքը լռնեցի:

—Օ՛, գէնէ (դարձեալ) բուսար,—բացականչեց նա դարմացական վրաս նայելով:

—Չարմանալու ոչինչ չը կայ, Հայրիկ, ուխտ եմ եկել:

—Հա, գիտեմ, դու ուխտատեղիներ կը սիրես,—պատասխանեց նա խորհրդաւոր շեշտով և շտապեց իր մօտ կանգնած պարոնին ճանապարհ դնել:

—Այդ պարոնի հեռանալուն պէս ես շտապեցի Հայրիկին զգուշացնել, որ նա ինձ իմ իսկական անունով չը կոչի, այլ որ իմ անունը այժմ Նշան Կարապետեան է, թաւրիղեցի:

—Նորէն մկրտվեր ես. աղէկ. հասկցայ: Բայց այստեղ քեզի համար ի՞նչ գործ կայ:

—Ես ուղարկված եմ յատկապէս ձեզ Եւրօպա տանելու:

—Հիմա ալ Խայրիկը պիտի փախցնես, խն-խն-խն,—ասաց նա ու ծիծաղեց: Բայց Խայրիկը ժանգոտած մեքենայ է,—աւելացրեց նա,—բանի մը պէտքական չէ:

—Ոչինչ,—ասացի,—ժանդոտած մեքենայի վրա ձեթ կը քսենք և նա կը գործի:

Իմ այդ խօսքերին նա չը պատասխանեց, այլ խօսքը փոխելով,—աչքդ լոյս,—ասաց նա,—Մակարնիդ մեռաւ:

Ճանապարհորդութեան մէջ գտնվելով, ես բաւական ժամանակ հայ լրագիրներ չէի կարդացել ու մինչ այդ ժամանակ չէի էլ իմացել Մակար կաթողիկոսի մահը: Հէնց այդ մահն էր ինձ գուժում խրիմեանը:

—Մթթէ Մակարը մեռել է. այդ երբ,—հարցրի ես Հայրիկից և այդ հարցումներն պատասխանը ստանալուց յետոյ աւելացրի.—էլ ինչո՞ւ իմ աչքը լոյս, Հայրիկ, շատ աւելի ձեր աչքը լոյս, որովհետեւ այժմ ձեզ կընտրեն նրա տեղը:

—Չէ, դիս չեն ընտրեր,—ասաց խրիմեանը մի տեսակ կասկածական շեշտով:

—Ինչ է, ակորժակ ունէ՞ք, Հայրիկ: Իսկ ես, ընդհանրապէս, հաւատացած եմ, որ եթէ դուք ցանկութիւն ունենաք կաթողիկոս դառնալու, ընտրվելու ամենահաւանական թեկնածուն դուք էք: Արծրունին և բոլոր մշակականները, անշուշտ, ձեր թեկնածութիւնը կը պաշտպանեն. չէ՞ որ Մակարից առաջ եղած ընտրութիւնների ժամանակ էլ դուք մշակականների առաջին թեկնածուն էիք, և եթէ այն ժամանակ «Մշակը» փակված չը լինէր, հաւանական էր, որ հէնց Մակարի փոխարէն դուք ընտրվէիք:

—Ծիշտ կըսես,—ասաց խրիմեանը,—բայց եթէ ես ընտրվեմ ալ, ձեր կառավարութիւնը դիս չի հաստատուի:

—Այդ կողմից արդէն դժուար է երաշխաւորելը, ի հարկէ: Բայց մթթէ, Հայրիկ, դուք կը ցանկանայիք կաթողիկոս դառնալ այսպիսի մի ժամանակ, երբ կաթողիկոսական բոլոր իրաւունքները խլված են և կաթողիկոսին այլ ես համարեա թէ ոչինչ չէ մնում անելու, բացի միմիայն լոկ կրօնական ու եկեղեցական գործերով զբաղվելը:

—Չէ, ես անանկ բան մըն էր՝ ըսի—պատասխանեց նա, բոլորովին անտարբեր վերաբերմունք ցոյց տալով դէպի

այն հարցը, որի մասին խօսում էինք:—Երևի, դուն չես գիտեր,—աւելացրեց խրիմեանը փոքրիկ լռութիւնից յետոյ,—թէ ինչով կը ղեկավարվի ցարի կառավարութիւնը ընտրված կաթողիկոսական թեկնածուներուն մէջէն ընտրութիւն անելու ժամանակ: Կաթողիկոսին մեռնելէն դեռ առաջ Պետերսբուրգէն թուղթ կը ղրկվի ռուսաց Պօլտոյ դեսպանին: Անշուշտ ատանկ թուղթ մըն ալ Կովկասի փոխարքայութեան կը ղրկվի: Այդ թուղթին մէջ երկար շարք մը հարցումներ կան տրված, որոնց դիմացը Պօլտոյ դեսպանը պէտք է պատասխաններ գրէ ու թերթը Պետերսբուրգ ուղարկէ այն ժամանակ, երբ հայերը կաթողիկոսական ընտրութիւնը կատարած վերջացուցած են և ընտրված թեկնածուները արդէն յայտնի են: Այդ թղթին մէջ տրված հարցումները սա են, թէ ի՞նչ աչքի զարնող եպիսկոպոսներ կան, որոնք կրնան հաւանականօրէն կաթողիկոսական թեկնածուներ համարվել: Եր ապա մանրամասն հարցապնդում կընէ այդ թուղթը իւրաքանչիւր եպիսկոպոսի մասին այն մտքով, թէ ի՞նչ տեսակ մարդ է նա. փառասէր է արդեօք, թէ՞ ոչ. դրամ սիրո՞ղ է, թէ՞ ոչ. կամքի տէ՞ր է, թէ՞ ոչ. ազատամիտ է, թէ՞ պահպանողական, և այլն և այլն: Ահա, դեսպանատան տուած այդ տեղեկութիւններովն է,—աւելացրեց խրիմեանը՝ ինձ համար բոլորովին նորութիւն կազմող՝ այդ տեղեկութիւնները հաղորդելուց յետոյ,—որ ցարի կառավարութիւնը կը ղեկավարվի կաթողիկոսական այս կամ այն թեկնածուն հաստատելու ժամանակ:

Մինչ այդ ժամանակ, որ ես խիստ սկսել էի կասկածել, թէ մթ գուցէ ես ինքս արջի ծառայութիւն մատուցեցի այն միսսիային, որի համար եկել էի, մտածելով, թէ մթ գուցէ հաւատացնելով խրիմեանին, որ Արծրունին ու մշակականները նրա թեկնածութիւնը կը պաշտպանեն կաթողիկոսական ընտրութիւնների ժամանակ, ես այդպիսով նրա մէջ կաթողիկոս դառնալու յոյսեր ներշնչեցի, ուստի և նա այժմ, կաթողիկոսական դահլ գերադասելով, այլևս չի ցանկանայ Եւրօպա փախչել,—կրկնում եմ, մինչ այդ ժամանակ,

որ ես սկսեի էի այդ մասին սաստիկ կասկածել, Խրիմեանի արած այդ պատմութիւնը լսելուց յետոյ ես բոլորովին միամտիցի ու հանգստացայ: «Պօլսի դեսպանը,—մտածում էի ինքս ինձ,—անշուշտ, այնպիսի ատեստատ կը տայ Հայրիկի մասին, որ ուսաց կառավարութիւնը նրան երբէք չի հաստատի: Այդ բանը ինքը՝ Հայրիկն էլ շատ լաւ է հասկանում, ուրեմն էլ ի՞նչ յոյսեր նա կարող է ունենալ: Եւ միթէ Հայրիկը այսպիսի մի ժամանակ, երբ մենք Հայաստանի ազատութեան նախօրեակումն ենք գտնվում և երբ այդ բաղձալի օրը փութացնելու համար Հայրիկը Եւրօպայում հազարապատիկ շատ աւելի մեծ գործ կարող է կատարել, քան թէ էջմիածնի կաթողիկոսական վանդակի մէջ նստած, միթէ այսպիսի մի ժամանակ, ասում եմ, Հայրիկը կը գերադասի աւելի կաթողիկոս դառնալ, քան թէ Եւրօպա գնալ և մեզ հետ Հայաստանի ազատութեան ու հայ ժողովրդի վերածրնութեան համար աշխատել: Չէ, Հայրիկը այդպիսի բան չի անի, եթէ նոյնիսկ ոչ մի կասկած չունենայ իր ընտրութեան ու հաստատման մասին:

Այս ու այսպիսի մտածմունքների մէջ էի ընկղմված, երբ Խրիմեանը մի-երկու քայլով դուրս գնաց սենեակից և ապա, վերադառնալով, պատուիրեց փոքրաւորին մեզ համար սուրճ բերել:

—Դու պոյսեցի Եսայեանները կը ճանչնաս,—հարցրեց ինձ յանկարծ Խրիմեանը:

—Ուսանողութեան ժամանակ ժընէվում մի ուսանող Եսայեան կար, նրան ճանաչում էի: Բայց ինչո՞ւ հարցրիք:

—Ոչինչ, այդ Եսայեանները հոս են. հիմա պիտի գան ինձի մնաց բարովի. այսօր կը մեկնին: Կուգե՞ս որ անոնք զքեզ հոս տեսնեն. Դեվկանցն *) ալ հոս է. այդ մարդը եկեր էր և կուգէր վարդապետ ձեռնադրվիլ, այն պայմանաւ միայն, որ հոս չապրի. բայց պատրիարքը պայման դրաւ,

*) «Շահէն ի Սիբիր» գրուածքի հեղինակը:

որ գոնէ 5 տարի հոս ապրի. ան ալ չընդունեց և հրաժարեցաւ ձեռնադրվիլէ:

—Դեվկանցին ճանաչում եմ,—ասացի,—և չէի ուզենայ, որ նա ինձ Երուսաղէմում տեսնի. նա կարող է բան կասկածել:

—Իշտէ ատոր համար հարցուցի. թէ որ չես ուզեր հանդիպիլ, խափէ՞ղ իմէ ու գնա: Երբ անոնք երթան, ես մարդ կը զրկեմ ու քեզի կը կանչեմ. հիմա սամավար ալ ունիմ, դնել կուտամ ու մէկ տեղ չայ կը խմենք:

—Իսկ կարելի է միթէ ձեզ մօտ յաճախ գալ, Հայրիկ:

—Հարկաւ: Ի՞նչ: Կը կարծէիր, թէ Հայրիկը բանտարկեալ է հոս:

Ուօք չը կայ, որ այդ հանգամանքը ինձ չափազանց ուրախացրեց և ես վերին աստիճանի ուրախ տրամադրութեան մէջ շտապեցի հեռանալ ու սպասել, մինչև որ Հայրիկը ինձ նորից կը կանչի, երբ Եսայեաններն ու Դեվկանցը հեռացած կը լինեն:

Հազիւ էի մտել խուցս, որ լուսամուտից տեսայ այդ պարոններին դէպի Հայրիկի խուցը գնալիս:

Տրամադրութիւնս հիանալի էր: Այն միտքը միայն, որ Հայրիկը Երուսաղէմում բանտարկեալի պայմանների մէջ չէ դրված, ինձ ահագին հրճուանք էր պատճառում: «Կը նշանակէ,—մտածում էի ինքս ինձ,—բոլորովին իզուր էին իմ բոլոր ենթադրութիւնները Երուսաղէմից փախչելու դժուարութիւնների մասին»: Վառքի պարիսպներից դուրս գալու և Հայրիկի հետ անձամբ տեսնվելու բոլոր դժուարութիւնները, որ ինձ համար ամենակարեւորն էին համարվում, արդէն չը կային այլևս. մնում էր միայն Հայրիկի համաձայնութիւնը ստանալ և իսկոյն հեռագրել օգնականիս, որ գայ: Ամենից աւելի ինձ մեծ ուրախութիւն էր պատճառում այն հանգամանքը, որ գալուս հէնց առաջին օրը ինձ աջողկեց Հայրիկի հետ տեսնվել, մինչդեռ առաջ ենթադրում էի, թէ ամբողջ օրեր պիտի սպասեմ ու հազար ու մի հնարագիտութիւն գործ դնեմ, մինչև որ կը կարողանամ նրա հետ

տեսնվել ու, առանց մի երրորդ անձի ներկայութեան, իմ առաջարկն ու ծրագիրները նրան պարզել: Միասիրայիս կէսը արդէն աջողած էի համարում, ուստի և ուրախութիւնից երեխայի նման սենեակիս մէջ թռչկոտում էի:

Աչքերս լուսամուտից չէի հեռացնում, սպասելով թէ երբ պիտի հեռանան Սրբիմեանի այցելուները: Բայց, ինչպէս երևում էր, նրանք շուտով հեռանալու մտադրութիւն չունէին, կամ, աւելի ճիշտ է ասել, ժամանակը ինձ համար չափազանց երկար էր թւում: Համբերութիւնս հատած և քաղց զգալով՝ նորից թիկն ընկայ յատակի վրա և վերցրի, իրբն շան բաժին, երեկոյին ինձ համար բերված և դեռևս իր տեղում մնացած հացն ու պանիրը և սկսեցի ուտել: Ջրի օգնութեամբ հաղիւ էի կուլ տուել չորացած հացի պատառները, երբ «օղաբաշին» դռան ետեից ձայն տուեց.

—Հաջի-աղա, Սրբիմեան սրբազանը քեզ կուզէ: «Թող գայ, չայ խմենք» ըսաւ:

Աւետարեւր հրաւէրը լսելուս պէս, «այս րօպէիս գալիս եմ» ասելով, տեղիցս ցատկեցի և շտապեցի Սրբիմեանի մօտ:

Այդ րօպէին ես այնպիսի տրամադրութեան ու մտախոհութեան մէջ էի, ինչպէս լինում են սովորաբար սիրահարված երիտասարդները, երբ գնում են առաջին անգամ իրանց սիրած աղջկայ ձեռքը խնդրելու: Թէև, ինչպէս ասացի, գնալով ես աւելի ու աւելի էի հաւատում, թէ Սրբիմեանը չը պիտի մերժի իմ առաջարկը, բայց և այնպէս այն րօպէին, երբ ես նրա մօտ էի գնում կտրուկ ձևով նրան առաջարկս դնելու և նրանից վերջնական պատասխան ստանալու, սիրտս սաստիկ բարախել սկսեց: Հէնց այդպէս սրտի զոզով էլ ես մտայ Սրբիմեանի սենեակը:

IX

—Եկուր, նստէ քովս,—ասաց Սրբիմեանը, երբ ես նրա սենեակը մտայ,—սամավարը շուտով պատրաստ կը լինի, գիտեմ, ուստի հայերդ չայ շատ կը սիրէք:

—Ոչ, Հայրիկ, ես շատ չայ սիրողներից չեմ: Աւելի լաւ է, պատմեցէք ձեր դրութեան մասին. ի՞նչպէս էք, ի՞նչ պայմանների մէջ էք ապրում:

—Իշտէ կապրիմ, կը տեսնես: Սուլթանը զիս զրկեր է հոս ապաշխարիլու, ես ալ կապաշխարեմ,—ասաց նա հեզ-նական ծիծաղով:

—Ձեզ վրա հսկողութիւնը խի՞ստ է,—հարցրի ես:

—Ձէ, հսկողութիւն չը կայ. զիս բոլորովին ազատ ձգած են հոս. ես առանց մէկումը հարցնելու կրնամ երթալ Բեթ-ղիհէմ, Յոպէ (Նաֆֆա) ու օրերով հոն կենալ:

—Այդ ի՞նչ հիւանալի բան էք ասում, Հայրիկ,—ասացի ես ուրախացած,—կը նշանակէ՞ դուք շատ հեշտութեամբ կարող էք այստեղից հեռանալ:

—Հոսկէ երթալը հարկաւ շատ դիւրին է, մենակ թէ, ասաց նա երեսայական կատարեալ միամտութեամբ,—եթէ հոսկէ փախչիմ, այլևս չեն թողուր որ Վան երթամ. գիտե՞ս, զիս հոս զրկելու ժամանակը այն-ինչ փաշան (անունը չեմ յիշում), այս-ինչ էֆենդիի (նոյնպէս չեմ յիշում անունը) միջոցով, ինձ խոստացաւ, որ քանի մը ամիսէն ետքը զիս պիտի թոյլատրեն ոչ միայն Պօլիս, այլ և Վան վերադառնալ: Շատ կը փափագիմ Վան երթալ:

—Եւ դուք այդ խոստումին հաւատացի՞ք, Հայրիկ, ու հալած իւրի տեղ ընդունեցիք,—ասացի ես միանգամայն դարձացած Սրբիմեանի այդ աստիճան միամտութեան վրա:

—Ի՞նչպէս կարելի է որեւէ նշանակութիւն տալ զանազան փաշաների կամ նոյնիսկ սուլթանի խոստումներին: Չարմա-նում եմ, որ դուք հաւատ էք ընծայել այդ խոստումներին:

—Ճիշտ է ըսածդ, ամմա Պօլիս բարեկամներ ես շատ ունիմ,—ասաց Հայրիկը փոքր ինչ անվստահ ձայնով,—որոնք կաշխատին ինձի համար:

—Հազար բարեկամներ էլ ունենաք և որչափ էլ աշխատեն նրանք, ձեզ այլևս երբէք թոյլ չեն տայ Պօլիս վերադառնալու. ուր մնաց, որ թողնեն Վան գնալու: Եւ, վերջապէս, այսպիսի ժամանակներում դուք ի՞նչ պիտի կարո-

դանաք Վանուս անել. չէ՞ որ, հակառակ բոլոր հաւանակա-
նութեան, եթէ ձեզ նոյնիսկ թոյլ տան Վան կամ Պօլիս վե-
րադառնալու, ձեզ այնպէս կը շրջապատեն դանազան լրտես-
ներով, որ դուք ինքներդ ուրախ չէք լինի ձեր վերադառ-
նալու համար: Ոչ, Հայրիկ, — ասացի ես աւելի ու աւելի
ոգևորված շեշտով, — ներկայ պատմական ժամանակներում,
երբ Հայաստանը երկունքի մէջ է, ձեր տեղը ոչ թէ Վանն
է կամ Պօլիսը, այլ Եւրօպան, ուր դուք կարող էք ձեզ կա-
տարելապէս ազատ զգալ և, առանց ձեր ձեռքերի ու լեզուի
վրա կապանքներ կրելու, կատարել այն դերը, որ արժան է
կատարելու հայ ժողովրդի Հայրիկին:

Հայրիկը նորից ազդվեց իմ խօսքերից. գոնէ ինձ այդ-
պէս թուաց. նրա տրամադրութիւնը փոխվեց: Այդ միջոցին
սպասաւորը մատուցարանի վրա երկու բաժակ թէյ բերեց
մեզ համար, և, երբ նա դուրս գնաց,

— Ատիկա լուրջ խնդիր է, — ասաց Հայրիկը, — այդ մա-
սին պէտք է լաւ մտածել. թող նախ մտածեմ, վերջը ես
քեզի պատասխան կուտամ:

«Թող մտածեմ» խօսքերն էլ մի յայտնի չափով դրական
պատասխան համարելով, իմ տրամադրութիւնն էլ սաստիկ
փոխվեց. ներքուստ ուրախութեանս չափ ու սահման չը
կար, և ես այժմ ինքս էի ցանկանում շուտով հեռանալ
Հայրիկի մօտից, որ նա ժամանակ ունենայ մի լաւ մտա-
ծելու իր անելիք քայլի մասին և շուտով ինձ պատասխան
տայ: Կատարելապէս վստահ էի, որ պատասխանը դրական
պիտի լինի, «որովհետեւ, — մտածում էի ինքս ինձ, — արդե-
ւառիթ առարկութիւնը այն էր, ինչ որ նա արեց արդէն և
ոչ մի կրիտիկայի չը դիմացաւ, ինչպէս որ ինքն էլ այդ
բանը լաւ զգաց. ուրիշ ի՞նչ առարկութիւն կարող է ունե-
նալ Հայրիկը»:

Բայց որովհետեւ անյարմար էր իսկոյն թողնել հեռա-
նալը, մանաւանդ որ խուցս էլ շատ մույլ և չոր ու ցամաք
մի բան էր ներկայացնում, ուստի դարձեալ մի ժամի չափ
մնացի Խրիմեանի մօտ:

Այս անգամ մեր խօսակցութիւնը Երուսաղէմի կարգի-
րի, վանականների, պատրիարքի և այլոց շուրջն էր դառ-
նում: Երբ ես նրան պատմեցի, թէ ինչպէս եմ ներկայացել
հիւրընկալ եպիսկոպոսին ու, օձիքս ազատելու համար, խոս-
տացել եղբայրներս Երուսաղէմ ուղարկել, աւելացնելով՝ որ
ես եղբայրներ չունեմ, Հայրիկը մի կուշտ ծիծաղեց: Եւ ապա,
— Հայր ու մայր ունի՞ս, — հարցրեց նա:

— Այո, ունեմ, — ասացի նրան:

— Էհ, ի՞նչպէս կըլլայ որ ծնողներդ թոյլ կուտան քեզի
յեղափոխական գործերու ետեւ պտտիլ:

— Ոչ միայն թոյլ են տալիս, — պատասխանեցի ես
պարծանքով, — այլ և նրանք են ինձ այդ ոգով դաստիարա-
կել և այժմ էլ նրանք պարծենում են, որ ես այս ճանա-
պարհով եմ ընթանում:

— Ուրեմն դու յորովայնէ ծնեալ ես, — ասաց Հայրիկը
և նորից մի լաւ ծիծաղեց: — Բայց զգոյշ կեցիր, հոս ոչ ոքի
մի վստահացիր, — աւելացրեց նա փոքր-ինչ լուսթիւնից
յետոյ:

— Հիւրընկալը ինձ պատուիրեց, Հայրիկ, որ վաղը
սուրբ Յարութեան եկեղեցին գնամ, իսկ միւս օրը՝ Բեթ-
ղեհէմ և այլն. եթէ այդ տեղերում էլ պէտք է ինձնից փող
պահանջեն, չեմ գնայ:

— Ձէ, չէ, ատանկ բան մի ընիր, — ասաց Խրիմեանը, —
հոս ուշադրութեան արժանի պատմական շատ հնութիւններ
կան. քանի որ հկած ես, գնա ամեն տեղերը պտտէ: Ստակ
ալ տուր, հոգ չէ. եթէ ստակդ պակսի, ես կուտամ:

— Խնդիրը ստակս պակսելու վրա չէ, Հայրիկ, — ասա-
ցի, — ախր այդ ստակը ժողովրդից կօպէկներով է հաւաք-
ված, ի՞նչպէս տանել այդ ձրիակերներին տալ:

— Երուսաղէմ եկողը ստակ պիտի տայ. այդ կանօն է.
ամեն մի սրբավայր իր դարբասը կառնէ:

Երբ խօսքը Յարութիւն պատրիարքի մասին դարձաւ,

— Գնա անպատճառ պատրիարքն ալ տես, — ասաց Հայ-
րիկը, — և քիչ մը երկար նստէ քովը, որպէսզի քեզի խանկէ

հրամացուէ. անոր խանութն յատկապէս Մէկքէէն կուգայ, ատանկ համով խանութ դուն ուրիշ տեղ հաղւեթէ կարողանաս գտնար:

Տեղն է այստեղ ասելու, որ Յարութիւն պատրիարքի «խանութն» յիրաւի որ մի աննման բան էր. նրա համն ու բուրմունքը ես երկար ժամանակ չէի կարողանում մոռանալ:

Երբ վեր կացայ Հայրիկին բարի գիշեր մղթելու,

— Դուն թանկ ապուր կը սիրեմ,— հարցրեց նա:

— Շատ եմ սիրում, Հայրիկ, և վաղուց է չեմ կերել,— ասացի:

— Անանկ է նէ, վաղը կէս օրին եկուր, միասին թանկ ապուր ուտենք: Հոս մի վանեցի ընտանիք կայ ուխտաւոր, ինձի համար լաւ թանկ ապուր կը պատրաստէ. ըսած եմ, որ վաղն ալ պատրաստէ. եկուր ուտենք:

Ուրախութեամբ ընդունեցի Հայրիկի հրաւերը և հրաժեշտ տուեցի, թողնելով նրան որ մի լաւ մտածի գիշերը արածս առաջարկութեան մասին:

Հիանալի տրամադրութեան մէջ վերադարձայ սենեակս. նրա յատակի մերկութիւնը այլեւ ինձ համար բոլորովին զգալի չէր. ընդհակառակը՝ չոր խտրի վրա փռված բարակ վերմակս ինձ համար մի շատ փափուկ անկողին թուաց, և ես նրա վրա պառկելուս պէս՝ հանգստացած ջղերով անուշ կերպով քնեցի:

Առաւօտեան զանգերի հետ զարթնելով, նորից գնացի, այս անգամ աւելի անդորր սրտով, նայելու այն բոլոր տեղերը, ուր ինձ նախորդ օրը առաջնորդել էր «օգարաշին»: Յետոյ դուրս եկայ վանքի պարիսպներից և գնացի քաղաքի հետ ծանօթանալու: Իսկ ժամը 12-ը դեռ չը քաղաքի վերադարձայ Հայրիկի մօտ: Ամենից առաջ ես նրան մանրամասն հաշիւ տուեցի իմ այցելած տեղերի, տեսածներին ու դիտածներին մասին, իսկ երբ ճաշի նստեցի, նա սկսեց ինձ հարց ու փորձ անել այն մասին, թէ ուր գնացի ես Պօլսից, ուր եղայ, ի՞նչ արեցի, ուր գնացին իմ այնտեղի ընկերները՝ Շմաւօնը և Մեղաւորեանը, ի՞նչ դրութեան մէջ է Աքիա

աքորոված Յարութիւն ճանկիւղեանը, յոյս կայ արդեօք նրան այնտեղից ազատելու, և այլն և այլն այս կարգի մի շարք հարցումներ:

Մեր ճաշը շատ շուտ վերջացաւ, որովհետեւ նա շատ անշուք էր. պանիր, թանկ ապուր, մի քանի հատ պինդ խաշած ձու, և տաճկական սուրճ: Երբ սեղանը հաւաքվեց և ես միամիտ էի, թէ փոքրաւորը այլ ես ներս չի գայ ու մեզ չի խանդարի, իսկոյն վերադարձայ ինձ ամենից աւելի հետաքրքրող հարցին:

— Էհ, Հայրիկ, գիշերս մի լաւ մտածեցիք երէկվայ խնդրի մասին. ի՞նչ կասէք այժմ:

— Ե՛մ, ատանկ շուտ կուզէիր: Ատիկա ատանկ ալ դիւրին խնդիր չէ, որ կարենայի մէկ գիշերվան մէջ որոշում ընել,— ասաց Հայրիկը խիստ լուրջ տոնով:

— Իսկ ի՞նչ երկար մտածելու բան կայ այդտեղ. խնդիրը շատ պարզ է:

Նա ինձ իսկոյն չը պատասխանեց: Ծակատի կնճիտները հաւաքած և աչքերը գետին յառած նա մտածմունքի մէջ էր ընկել, իսկ ես հարցական նրա երեսին էի նայում ու սպասողական դիրքի մէջ էի: Մի քանի րօպէի լուծիտից յետոյ,

— Եթէ այստեղից փախչեմ,— ասաց նա մտախոհ ձայնով,— տոմսականներս այլ եւս ինձ չեն տար:

— Ի՞նչ ամսական, Հայրիկ,— հարցրի, առանց ոչինչ հասկանալու:

— Դու չը գիտես որ կառավարութիւնը ինձի 20 ոսկի ամսական կուտայ. եթէ փախչիմ, այդ ամսականներս այլեւ չեն տար,— պատասխանեց նա այնպիսի պարզամտութեամբ, որ կարծես թէ խնդիրը իր սեփական կալուածներից ստանալիք եկամուտների մասին էր:

Ես միանգամայն շանթահարվեցի. աչքերս չոտած մի քանի րօպէ նրա երեսին էի նայում, չը կարողանալով ոչ մի բառ արտասանել: Այդ խօսքերով ու նրանց արտասանելու պարզ եղանակով Խրիմեանը իմ գլխին մի ամբողջ

կարաս սառը ջուր էր անել: Մի ակնթարթում իմ միջից անհետացաւ այն ամբողջ հմայքն ու հրապոյրը, որ ես մինչ այդ ժամանակ տածում էի դէպի այդ մեծ հայրենասէրը, դէպի ամբողջ մի ազգի կողմից «Հայրիկ» անունը վաստակած մարդը: Մի քանի րոպէ ես միանգամայն սառել ու քարացել էի, ապա՝ ինքս ինձ հաւաքելով՝

—Այդ ինչ էք ասում, Հայրիկ,—ասացի նրան կէս յանդիմանական և կէս վշտացած ձայնով,—այդ ինչ բանի մասին էք մտածում. միթէ դուք ենթադրում էք, որ, առանց սուլթանի գանձարանից 20 ոսկի ստանալու, դուք քաղցած պիտի մնաք: Եւ ինչ մի մեծ պահանջներ ունէք դուք. միթէ հէնց այսօր չը տեսայ ձեր ճաշը. այդ թրտեղ դուք չը պիտի կարողանաք մի քանի ձու և թանէ ապուր գտնել: Միթէ դուք վախենում էք, որ այն ժողովուրդը, որը ձեզ «Հայրիկ» անունն է տուել, չը պիտի կարողանայ իր Հայրիկի թէկուզ ամենամեծ պահանջներն անգամ հոգալ: Եւ ինչ կասի այն ժողովուրդը, եթէ իմանայ, որ Հայրիկը, սուլթանի նշանակած 20 ոսկի ամսականից դրկվելու վախից դրդված, հրաժարվեց իր ազատագրական շարժումի գլուխը անցնել:

Խրիմեանը շատ լաւ դժաց իր արած պատճառարանութեան կատարեալ անհեթեթութիւնը և նրա թողած վերին աստիճանի իր համար աննպաստ ու վատ տպաւորութիւնը:

—Չէ, տղաս,—ասաց նա խօսակցութեան մոռնը բոլորովին փոխած և փոքր-ինչ լռութիւնից յետոյ,—կարծեմ քեզի ըսի, որ թող մտածեմ:

—Շատ լաւ, մտածեցէք,—ասացի և խօսակցութեան նիւթը փոխեցինք:

Փոքր ինչ դէսից-դէնից զրուցելուց յետոյ հեռացայ Խրիմեանի մօտից, թողնելով որ նա դարձեալ մտածի...

X

Նրանից յետոյ մի քանի օր ես այլևս ոչինչ չը հարցրի Խրիմեանին, թէ նա ինչ է մտածել և ինչ որոշել իմ առա-

ջարկի մասին: Համարեա թէ ամեն օր նա մարդ էր ուղարկում իմ ետեից, կանչում էր, և մենք ժամերով զրուցում էինք դէսից-դէնից. բայց նա բոլորովին չէր վերադառնում ինձ հետաքրքրող խնդրին, իսկ ես էլ սպասում էի, որ ինքը, վերջապէս, ինձ յայտնի իր որոշումը: Չէ՞ որ նա շատ լաւ գիտէր, որ ես իր վերջնական պատասխանին եմ սպասում և հէնց դրա համար եմ մնացել Նրուսադէմում:

Մէկ անգամ իր մօտ կանչելով Խրիմեանը՝ ինձ ասաց.

—Աչքդ լուս, Խանազատեան, պատրիարքը քեզի յանձնարարութիւն կուզէ ընել:

Ես հարցական նայեցի նրա երեսին:

—Դուք պատրիարքին ըսեր ես, որ պարսկաստանցի ես,—շարունակեց նա ծիծաղով,—և հիմա կուզեն հետդ մի սարկաւազ դնել, որ տանիս Պարսկաստան: Երուսաղէմէն մէկ պատուիրակ է գնացել Պարսկաստան հանգանակութիւն ընելու, և նա վերջերս իր համար մէկ փոքրաւոր էր ուղած: Չը գիտէին ինչպէս ուղարկել փոքրաւորը. տղան ոչ ճանապարհներուն ծանօթ է և ոչ ալ լեզու գիտէ: Իսկ այժմ կուզեն առիթէն օգտվիլ և տղան հետդ դնել, որ դուն տանիս:

—Բայց չէ՞ որ ես ասել եմ, որ այժմ Պարսկաստան չեմ վերադառնում և համարեա Պարսկաստանը չեմ էլ ճանաչում, քանի որ փոքր հասակից եմ այնտեղից դուրս եկել և Օղեսսայում ենք հաստատված:

—Կերևի, լաւ չեն հասկցած այդ կէտը. երբ քեզի դիմեն, բացատրէ և մէջէն ելիր, ինչպէս որ գիտես:

—Ամենից լաւն է, Հայրիկ, թող այդ սարկաւազը ինձ մօտ գայ, ես՝ նրան մանրամասն բացատրեմ ճանապարհները ու մինչև Պարսկաստան գնալու ձևը, և թող ինքը մենակ գնայ:

—Այդ ամենէն աղէկն է,—ասաց Հայրիկը,—մենակ թէ, նայէ, տղուն խելքէ չը հանես ու չը խենթացնես:

Ուզում էր ասել, որ սարկաւազին պրօպագանդ չանեմ

ու մի կէս ժամվայ մէջ նրան յեղափոխական չը դարձնեմ: Ես, ի հարկէ, միայն ծիծաղեցի:

Մի այլ անգամ իր մօտ կանչելով խրիմեանը ինձ ծանօթացրեց մի երիտասարդի հետ, ասելով՝

—Երուսաղէմի մէջ ասոր մենակ կրնաս վստահիլ ու հետը ազատ կերպով խօսիլ. նայէ, ուրիշ ոչ մէկու չը վրստահիս:

Այդ պարոնը Ս. Սապահ-Գիւլեանն էր, «Հնչակ» թերթի այժմեան խմբագիրը, որը այն ժամանակ Երուսաղէմի ժառանգաւորաց դպրոցում ուսուցիչ էր և այնտեղ յայտնի էր Կիւրեղեան անունով. հէնց այդ անունով էլ Հայրիկը նրան ծանօթացրեց ինձ հետ:

Այդ ժամանակամիջոցում էս ծանօթացել էի և վանեցի սպասաւորի հետ, որի մասին, ինչպէս յիշողութիւններէս նախորդ գլուխներից մէկում էլ ասացի, ինձ յանձնարարել էին Ալէքսանդրիայից: Այդ երիտասարդը ապրում էր խրիմեանի փոքրաւորի հետ միևնոյն սենեակում, և նա ինձ յայտնեց, որ այդ փոքրաւորը Յարութիւն պատրիարքի կողմից նշանակված էր շատ աւելի խրիմեանին լրտեսելու համար:

—Քանի-քանի անգամ ներս մտած ու տեսած եմ, թէ ինչպէս Հայրիկի բացակայութեան այս սարկաւազը կը կարգայ սեղանի վրա մոռցված նամակները: Քանիցս անգամ զգուշացուցած եմ Հայրիկը, որ նամակներ չը թողնէ սեղանի վրա, բայց նա հէջ ականջ չի կախեր:

Պէտք է ասել, որ խրիմեանը բաւականին մօտիկ յարաբերութեան մէջ էր գտնվում Յարութիւն պատրիարքի հետ. յաճախ սրա մօտ այցելութեան էր գնում և ամբողջ ժամերով, մանաւանդ գիշերները, միասին էին անցկացնում: Այդ բանը նկատելով և Հայրիկի հաւատարիմ սպասաւորից լսելով վերոգրեալը՝ էս մի անգամ դժգոհութեամբ հարցրի խրիմեանին.

—Այդ ի՞նչ էք հասկանում դուք այդ պատրիարքից, Հայրիկ, որ այդպէս յաճախ նրա մօտ էք գնում:

—Ձէ, գիտե՞ս,—պատասխանեց նա,—անիկա հին-հին պատմութիւններ շատ գիտէ, իսկ ես ալ կը սիրեմ հին պատմութիւններ լսել. կերթամ քովը, կը պատմէ, ես ալ մօտիկ կընեմ:

Այսպէս մի քանի օր խրիմեանի մօտ շարունակ այցելելուց ու գէսից-գէնից արված խօսակցութիւններով ժամանակ անցկացնելուց յետոյ, երբ վերջապէս նկատեցի, որ Հայրիկը բոլորովին դիտաւորութիւն չունէր իմ առաջարկած խնդրին վերադառնալու, որոշեցի ինքս նորից խնդրը բանալ և հասկանալ, վերջապէս, թէ երբ է ուզում նա, որ Երուսաղէմը թողնենք:

—Էհ, Հայրիկ, ոչինչ չէք ասում ախր, թէ երբ էք ցանկանում, որ ճանապարհ ընկնենք այստեղից,—ասացի նրան մի յարմար բօլէի և այնպիսի տոնով, որ կարծես թէ խընդիրը արդէն որոշված լինէր:—Ձէ՞ որ անհրաժեշտ է պատմութիւններ տեսնել:

—Օո, դուն կուգես՝ որ հէնց հիմա երթամ ես քեզի հետ,—ասաց նա զարմացմամբ և այնպիսի ձևով, որ կարծես թէ իմ առաջարկի միտքը չէր հասկացել առաջ և այժմ է միայն հասկանում:

—Ի՞նչպէս թէ,—ասացի ես ոչ պակաս զարմացմամբ,—ապա ինչո՞ւ համար եմ եկել այստեղ և ինչո՞ւ չը պէտք է դուք գաք ինձ հետ, ի՞նչն է ձեզ արգելում:

—Եթէ յանկարծակի այստեղէն անհետանամ,—ասաց նա չափազանց լուրջ տոնով,—կառավարութիւնը այս բոլոր սրբավայրերը խուզարկութեան կենթարկէ ու տակն ու վրա կընէ, ինչպէս որ նա ըրաւ Վարագայ վանքը: Այս բոլոր հնութիւններն ու սուրբ տեղերը մեր ձեռքէն կըրթան:

Այս նոր առարկութիւնը ինձ՝ ոչ-հաւատացեալիս և Հայաստանի մօտալուտ ազատութեանը սաստիկ հաւատացող ֆանատիկոսիս՝ նոյնչափ զարմացրեց ու ապշեցրեց, որչափ և ապշեցրել էր Հայրիկի 20 ոսկիների մասին արած առարկութիւնը:

—Ինչնե՞րիս է պէտք, Հայրիկ,—ասացի,—թէ այս սըր-

բավայրերը տակն ու վրա կը լինեն կամ բոլորն էլ ձեռքից կերթան. չէ՞ որ այս բոլորիս ամբողջ հայ ժողովուրդն է ձեռքից գնում. նրան կորստից փրկելու փոխարէն դուք սրբավայրերի մասին էք մտածում: Արդեօք ժողովուրդն է սրբավայրերի համար, թէ ոչ՝ սրբավայրերը ժողովրդի համար: Ժողովուրդը ձեռքից գնալուց յետոյ էլ հում պիտի պէտք գան այս հնութիւնները, այն ինչ կենդանի մնացած ժողովուրդը միշտ էլ կը կարողանայ այսպիսի հնութիւններ ձեռք բերել և նրանց շատ աւելի պայծառ դրութեան մէջ պահել: Կրկնում եմ, որ դուք չը պիտի մոռանաք և այն, որ հայ ժողովուրդը ձեզ Հայրիկ անունն է տուել և նա իրաւունք ունի պահանջելու, որ իր Հայրիկը նրան ամենամեծ ծառայութիւնը մատուցանի իր կրօնիքական օրերին: Իսկ դուք յանկարծ սրբավայրերը ձեռքից չը թողնելու համար՝ ուզում էք թողնել, որ ամբողջ ժողովուրդը ձեռքից գնայ:

— Դու անկրօն ես, — ասաց Հայրիկը ի պատասխան իմ այդ յորդորանքների, — ատանք բաներ դուն չես հասկնար:

Այդ բոլորիս ես զգացի, որ, յիշաւի, ես Խրիմեանին չեմ կարող հասկանալ: Աւելին կասեմ. ես այդ ժամանակ զգացի, որ ամբողջ հայ ազգն էլ նրան չէ կարողացել հասկանալ, և նրան միշտ ենթադրել է բոլորովին այլ բան, քան նա է իրապէս:

Խրիմեանը, երևի նկատեց իմ հիասթափութիւնն ու այլայլումը և փորձեց մի այլ և վերջին պատճառաբանութեամբ ինձ համոզել:

— Դիտե՛ս, մի ուրիշ հանգամանք ալ կայ, — ասաց նա. — կառավարութիւնը զիս Յարութիւն պատրիարքի հսկողութեանն է յանձնած, իսկ պատրիարքն ալ վրաս մեծ վստահութիւն ունի և շատ ազատ կը ձգէ զիս. ինչպէս ըսի, ես կրնամ բոլորովին ազատ կերպով Բեթղեհէմ կամ Յոպպէ երթալ ու ամբողջ օրերով հոն կենալ: Եթէ այժմ փախչեմ, պատրիարքի օձիքը կը մնայ կառավարութեան ձեռքը և անոր շատ նեղութիւն կուտան: Դուն հիմա գնա, ես վերջէն կուգամ ձեզի կը գտնեմ: Պօլսի բարեկամներս այժմ կաշ-

խատին, որ զիս թոյլ տան Պօլիս վերադառնալու. կը տեսնեմ, եթէ այդ չաջողվի, հիւանդ պիտի ձեւանամ և կառավարութեանն թոյլտուութիւն պիտի խնդրեմ յեզիպտոս օդափոխութեան երթալու. այդ ինձի թոյլ կուտան, և ես անկէ կրնամ եւրօպա անցնիլ ու ձեզի գալ:

Ես չը գիտէի, թէ արդեօք, յիշաւի՞ այդ աստիճան միամիտ է Հայրիկը, թէ՞ ինձ է չափազանց միամիտ կարծում: Եւ շատ աւելի այս վերջինը ենթադրելով ու չը կամենալով որ նա այդ կարծիքը ունենայ, ես նրան պատասխանեցի, ի հարկէ, այս անգամ ոչ այնքան նրան համոզելու, քան աւելի նրա՝ իմ մասին ունեցած այդ կարծիքը փարատելու նպատակով:

— Կարող եմ նախօրօք ձեզ ապահովեցնել, Հայրիկ, — ասացի նրան, — որ ձեզ ոչ մի կերպ չեն թոյլ տայ ոչ Պօլիս վերադառնալու և ոչ Եզիպտոս օդափոխութեան գնալու: Թիւրք կառավարութիւնը, այո, յիմար է, բայց ոչ այն աստիճան, որ կարելի լինի նրան այդպէս հեշտութեամբ խաբել: Իսկ ինչ վերաբերում է այն բանին, որ ձեր այստեղից փախչելովը Յարութիւն պատրիարքը կարող է պատասխանատուութեան ենթարկվել, դա էլ մի համոզեցուցիչ փաստ չէ. նախ՝ ինչ պիտի անեն պատրիարքին. հօ չը պիտի կախեն. ամենաշատը՝ կարող են մի քանի ամիս բանտ նստեցնել. իսկ դա ինչ մեծ բան է. թող այդ արարք *) մի քանի ամիս էլ բանտ նստի. շատ-շատ՝ փոքր-ինչ վիզը պիտի բարակի, ուրիշ ինչ պիտի լինի:

Այս վերջին խօսքերիս վրա Խրիմեանը ծիծաղեց և ապա, լուրջ կերպարանք ընդունելով,

— Ձէ, դուն կը սխալիս, — ասաց նա, — դուն հիմա գնա, քանի մը ամսէն ես կը գամ ձեզ կը գտնեմ:

Այս եղաւ Խրիմեանի վերջին պատասխանը, և ես, իմ միասխան այլևս վերջացած համարելով, որոշեցի հէնց միւս առաւօտը ճանապարհ ընկնել դէպի Եաֆֆա ու այնտեղից էլ Եզիպտոս վերադառնալ:

*) Յարութիւն պատրիարքը արաբական ծագում ունի:

Խրիմեանից չափազանց հիասթափված լինելով հանդերձ, չուզեցի առանց նրան վերջին հրաժեշտ տալու հեռանալ: Միւս օրը, երբ գնացի նրան մնաք բարև ասելու, նա մի քանի եպիսկոպոսների ու վարդապետների հետ կանգնած սեղանատան մօտ խօսում էր: Ինձ տեսնելով՝ Խրիմեանը բաժանվեց խմբից և

—Հը, կը չուեմ արդէն,—ասաց ձեռքը ինձ մեկնելով,
—Խայրիկը չը մոռնաս, հասցէդ գրէ. ընկերներուդ ալ բարև ըրէ:

—Այո, գնում եմ, այլ ևս ինձ այստեղ ոչինչ չը կայ անելու,—ասացի և շտապով հեռացայ նրանից, կատարելապէս խորտակված յոյսերով և լի հիասթափութիւններով:

Խրիմեանը, ի հարկէ, Եւրօպա չանցաւ: Նա, ինչպէս որ գուշակել էի, Արծրունու և մշակականների (սրանց մէջ այն ժամանակ չափազանց մեծ տեղ էին բռնում արդի դաշնակցականները) ջանքերով ընտրվեց ամենայն հայոց կաթողիկոս և, հակառակ իրան՝ Խրիմեանի արած ենթադրութեան, հաստատվեց ցարի կառավարութեան կողմից: Այդ հաստատման լուրը լսելով՝ ևս չափազանց զարմացայ, և զարմացայ աւելի այն տեսակէտով, որ ուսաց Պօլսի դեսպանը շատ աւելի լաւ էր կարողացել ճանաչել Խրիմեանին, քան ամբողջ հայ ազգը...

Երուսաղէմից յետոյ ևս Խրիմեանին տեսայ ամբողջ 10 տարուց յետոյ, 1901 թվականին, Էջմիածնի վեհարանում:

Թէ այդ տեսակցութեան և թէ այլ մի երկու բնորոշ փաստերի մասին յաջորդ գլխում:

XI

Երևի, կը յիշեն ընթերցողները, որ անցեալ տարի հրատարակած «Դաշնակցութիւնը և իր ղեկավարները» գրքոյկում ևս առիթ էի ունեցել յիշելու այն պատմական դէպքը, որ 1892 թվականին, ճիշտ այն ժամանակ, երբ այստեղ Կովկասում կաթողիկոսական ընտրութիւնների խիստ պայքարն

էր տեղի ունենում, Սասունի հնչակեան գործիչ Տամադեանը մի ընդարձակ տեղեկագրութիւն ուղարկեց այդ կուսակցութեան կենտրոնական վարչութեանը, որ այդ ժամանակ ժընէվից տեղափոխվել ու հաստատվել էր Աթէնքում:

Տեղեկագրութիւնը, ինչպէս ասել էի, ուղարկված էր յատուկ սուրհանդակների ձեռքով և, աւելի մեծ ապահովութեան համար, Տամադեանը միևնոյն դօկումենտներից ուղարկել էր երկուական օրինակ, բայց բոլորովին տարբեր ճանապարհներով. սուրհանդակներից երկու հոգի ճանապարհ էին ընկել Ալաշկերտի վրայով դէպի Կովկաս, իսկ միւս երկու հոգին եկել էին Կիլիկիայի ճանապարհով:

Այս վերջինները, Օհանէսը և Կարապետը,—Մշոյ դաշտեցի պարզ գիւղացիներ,—անագին նեղութիւններ էին քաշել ճանապարհին և հագիւ հազ կարողացել էին իրանց Միջերկրականի ափը գցել: Այդտեղ նրանց փողը բոլորովին վերջացել էր: Եթէ յիշողութիւնս ինձ չէ դաւաճանում, նրանք թաւանվել էին, բայց իրանց յանձնված աւանդը, որ մատիտի միջուկի ձևով յարմարեցրել էին իրանց ձեռնափայտի մէջ, բոլորովին ապահով էին պահել: Նաւավարձ չունենալով և Յիսուսի շնորհքից էլ զուրկ լինելով, որպէսզի կարողանային Միջերկրականը ոտքով անցնել, նրանց մէջ միտք է յղանում՝ գնալ Երուսաղէմ, բացատրել «խայոց Խայրիկին» խնդրի էութիւնը և նրանից ճանապարհածախս վերցնելով՝ շարունակել ճանապարհը մինչև Աթէնք:

Երուսաղէմում նախ չափազանց մեծ է լինում այդ գեղջուկների հիասթափութիւնը, երբ «հիւրընկալ սրբազանը» նրանցից «դարբաս» է պահանջում և, երբ նրանք ստում են, թէ իրանք խեղճ մարդիկ են ու փող չունեն, սաստիկ բարկանում է նրանց վրա ու վռնգում սուրբ Յակոբի բակից, ասելով՝ որ խեղճերն ու փող չունեցողները չը պէտք է ուխտ գան:

Դրանից յետոյ նրանք ներկայանում են «խայոց Խայրիկին»: Առաջին անգամ գնում ներկայանում է Օհանէսը: Բայց հէնց որ Խրիմեանը հասկանում է խնդրի էութիւնը, նոյնպէս սաստիկ բարկանում է նրա վրա և պահանջում, որ

Թէ ինչպէս և ինչ ձևով էր Աղայեանը բացատրում այն ժամանակ Սրբիմեանի վարմունքը, ես այժմ չեմ յիշում, բայց շատ լաւ յիշում եմ, որ նա շարունակ կրկնում էր.

—Դուք չը գիտէք, Սրբիմեանը մեծ մարդ է:

Որչափ յիշում եմ, ես և ընկերներս իսկի չէինք էլ աշխատում նրա հետ վիճել այդ նիւթի մասին կամ հրապարակել նրան: Շատ աւելի այդ մասին վիճում էին Օհանէսն ու Կարապետը, որոնք սաստիկ զայրանում ու կատաղում էին, երբ Աղայեանը ոգևորված պաշտպանում էր Սրբիմեանին:

—Կաթողիկոս դառնալով, Հայրիկը շատ աւելի լաւ կարող է գործել,—ասում էր յափշտակված Աղայեանը,—քան թէ նա ձեզ լսէր ու Եւրօպա գար:

—Կը տեսնենք, պ. Աղայեան, կը տեսնենք պատասխանում էինք մենք նրան:

—Սասնում լուրջ աշխատանքներ են կատարվում,—ասացինք մի անգամ Աղայեանին,—մեծ պատրաստութիւններ են տեսնվում և դրամի ահագին կարիք կայ, երբ Կովկաս վերադառնաք, աշխատեցէք մեծ գումար հաւաքել ու Սասուն հասցնել:

—Մինչև Սրբիմեանը Կովկաս չը գայ, մենք ոչինչ չենք կարող անել,—եղաւ Աղայեանի պատասխանը:

—Իսկ ինչպէս ընդունեց Սրբիմեանը ձեր առաջարկը կաթողիկոս լինելու մասին,—հարցրի ես մի անգամ Աղայեանին:

—Շատ ուրախութեամբ,—պատասխանեց նա:—Քանի որ իմ ժողովուրդը կամենում է ինձ այդպիսի ծանր պաշտօնի կոչել,—ասաց Հայրիկը,—ես ինչ կարող եմ անել, պէտք է ընդունեմ:

Պարզ էր, որ կաթողիկոսական գահի վրա բազմելը շատ աւելի ծանր բան էր թւացել Սրբիմեանին, քան Եւրօպա գնալը...

Ամերիկայումս էի արդէն, երբ լրագիրներից իմացայ Սրբիմեանին կաթողիկոսութեան հաստատելու լուրը: Եւ ձիշտ այն ժամանակ, երբ Թիֆլիսից պատգամաւորութիւնը ճանապարհ էր ընկնում Սրբիմեան կաթողիկոսին Երուսաղէմից Կովկաս տանելու համար, ես յանդգնութիւն ունեցայ Սրբիմեանին մի նամակ ուղարկելու, որով թէև շատ քաղաքավարի և նուրբ ոճով, բայց և այնպէս աշխատել էի հասկացնել, որ նա չափազանց մեծ սխալ էր գործել՝ մերժելով Եւրօպա գալու առաջարկը և ընդունել կաթողիկոսութիւնը:

«Կովկասցիները,—գրել էի մօտաւորապէս այդ նամակում,—ձեզ Կովկաս են տանում նոյն նպատակով, ինչ նըպատակով որ մենք ձեզ Եւրօպա էինք ուղում բերել: Թէև դա մի մեծ սխալ է, որովհետև կաթողիկոսական վանդակը չափազանց նեղ է այդպիսի գործունէութեան համար, բայց և այնպէս ժողովուրդը, ձեր մէջ գերմարդկային ոյժ ենթադրելով, ձեզնից հրաշքներ է սպասում: Երանի թէ չը հրաժարվէր այդ ժողովուրդը»:

Նամակս ուղարկեցի մի այլ՝ նոյնպէս Երուսաղէմում աքսորական եպիսկոպոսի միջոցով, որի հետ ընկերներիցս մէկը՝ հանգուցեալ Գարեգին Չիթճեանը նամակագրութիւն ունէր: «Նամակը յանձնեցի ըստ պատկանելոյն»,—գրել էր այդ եպիսկոպոսը Չիթճեանին իմ ուղարկած նամակի առիթով:

Այնուհետև ես լրագրների միջոցով քայլ առ քայլ հետևում էի, թէ ինչպիսի կայտառութեամբ ու սրտի բերկրանքով էր «ժանդատած մեքենան» Եւրօպայի վրայով ուղևորվում գէպի էջմիածին: Հետևում ու պարզ տեսնում էի նոյնպէս, թէ ինչպէս, յիշաւի, միամիտ հայ հասարակութիւնը Սրբիմեանից հրաշքներ էր սպասում և ապա՝ հետզհետէ աւելի ու աւելի հրաժարվում:

Ինչպէս վերեւում ասացի, Խրիմեանին վերջին անգամ ես տեսայ Էջմիածնի վեհարանում 1901 թւականի ամառը: Կնոջս հետ մենք գնում էինք Պարսկաստան—Թաւրիզ: Մեզ հետ էին և մեր վիպասան Վ. Փափազեանն ու իր կինը: Հանգամանքից օգտվելով, գնացինք և Էջմիածին, մանաւանդ որ կինս երբեք չէր եղած այդ կողմերում և շատ հետաքրքրվում էր: Կաթողիկոսը այնտեղ չէր. գնացել էր ձիով մերձակայ գիւղերը պատելու, բայց հէնց մեր գնացած օրվայ երեկոյին վերադարձաւ: Ես սաստիկ հետաքրքրվում էի մի կերպ հասկանալ, թէ արդեօք Խրիմեանը չէ՞ գղջացել՝ կաթողիկոսական գահը գերադասելով այն գործունէութիւնից, որի համար ես նրան հրաւիրել էի Եւրօպա: Այդ հարցը ինձ համար նամանաւանդ հետաքրքրական էր այն տեսակէտից, որ ձիւշտ այդ ժամանակներում հայ ժողովուրդը սաստիկ հիասթափված էր իր կաթողիկոսից, այն աստիճան հիասթափված, որ նրա այս կամ այն քաղաքը այցելելը նոյնիսկ բոլորովին աննշան կատելի էր մնում:

Մենք վեհարանումն էինք, երբ կաթողիկոսը ձիուց իջաւ և իր կացարանը բարձրացաւ: Նա մեզ նկատել և Կոբիւն վարդապետից տեղեկացել էր մեր ով լինելու մասին: Բայց մենք, այսինքն կինս և ես (առանց տ. և պ. Փափազեանների) կաթողիկոսին ներկայացանք միւս օրը առաւօտեան: Ի հարկէ, մեր ներկայանալուց առաջ դարձեալ Կոբիւն վարդապետը գնաց Հայրիկին յայտնելու, որ մենք ցանկանում ենք իրան տեսնել և նորից նրան յայտնել էր մեր ով լինելը: Շատ պարզ է, որ ես սպասում էի, թէ կաթողիկոսը ինձ հետ պիտի հանդիպի իբրեւ մի հին ծանօթի: Բայց որչափ մեծ եղաւ զարմանքս, երբ մենք ներս մտանք ու ձեռք համբուրեցինք (այս անգամ նա այնպիսի ձեռով ձեռք մեկնեց, որ պէտք էր համբուրել), նա հարցրեց.

—Ո՞ր տեղացի ես:

Ինձ թուաց, թէ նա հարցնում է՝ «Ռոտեղից ես գալիս», ուստի պատասխանեցի.

—Նոր-Նախիջևանից ենք գալիս, Հայրիկ, և գնում ենք Թաւրիզ:

—Ձէ, այդ չեմ հարցնել, —ասաց նա, —կըսեմ. Ռոտեղացի ես:

—Ի՞նչպէս, Հայրիկ, մի՞թէ ինձ չէք ճանաչում: Ես երեւանցի Խանազատեանն եմ:

—Էհ, Խաչրիկը շատ մարդ կը տեսնի, Ռոտեղացի մէկին յիշեմ: Դուռն էն աղը բելին ես (անուանի) հա՛. բայց դուռն դամբօւր (կուզիկ) էիր:

—Հիմա էլ դամբուր եմ, Հայրիկ, ահա, նայեցէք, —ասացի և կրունկի վրա պտտվեցի, թիկունքս նրան ցոյց տալով:

—«Վտակի» մէջ այն դռնն ես գրեք թիւքքիայի մասին: Շատ լաւ ես գրեք, կարգացի. պիտի խրկեմ այս ինչ փաշային (նա մի ինչ-որ հայ փաշայի անուն տուեց), որ այդ ժամանակ Պօլսում միսիստրական բարձր պաշտօնեայ էր), որ նա ալ կարդայ *): Աս ալ կ'ընդ է. կարգու՛նք ես, աղէկ ես ըրեր:

Եւ ապա, դառնալով կնոջս՝

—Աս շատ ընդ ծով և ընդ ցամաք պտտող է. լաւ նայէ, որ առաջվան պէս խենթութիւններ չընէ: Եթէ քեզի մտիկ չընէ, ինձ գրէ, ես ապահարզան կուտամ: Թաւրիզ կերթաք, —ուղղեց խօսքը երկուսիս էլ, —խօսեցէք այնտեղի ազդեցիկներուն, որ Սալմաստի ենիչերիններու սանձը քաշեն. շատ խայտառակութիւններ կընեն անոնք. ըսէք, որ Խաչրիկը շատ դժգոհ է իրենցմէ: Թաւրիզ տեղացի լաւ մտածող ու տեղին պայմանները հասկցող մարդիկ շատ կան. էսոնց ըսէք, որ Եղիշէ Մուրադեանին աջակցին գործերը կառա-

*) Սօսքը «Փոքր-Ասիայում շինվելիք երկաթուղիների առիթով» յօդուածիս մասին էր, որ տպագրվել էր Ֆիշտ այն ժամանակ նոր լոյս տեսած «Վտակ» ժողովածուի մէջ:

վարելու. Եղիշէն եռանդ շատ ունի, ամձա վերձառութիւն
չունի:

Այսպէս մօտ 20 բօպէ Սրբիմեանը մեզ հետ խօսեց, շա-
րունակ մի հարցից միւսը անցնելով և մի վայրկեան անգամ
Ժամանակ չը տալով որ մենք խօսենք կամ մի բան հարց-
նենք, չը նայելով որ նա շատ տկար է, երևում, շնչառու-
թիւնը կտրվում էր և հազիւ հազ էր կարողանում նախ
դասութիւնները միմեանց կապել: Իսկապէս, նախկին հրա-
կայական ու գեղեցկադէմ Սրբիմեանից համարեա թէ կմախքն
էր ֆուսել:

Ժամանակ չը տալով ինձ ոչինչ հարցնելու, նա ինքն
էլ ոչ մի խօսքով չուզեց անցեալի խնդիրների մասին յիշել:
Նրա անկապ ու անվերջ խօսելը ինձ վրա այն տպաւորու-
թիւնը թողեց. որ նա այդ անում էր դիտմամբ. նա ամեն
կերպ զգուշանում էր, թէ մի գուցէ ևս հին վէրքը բանամ.
այդ բանից նա միանգամայն խուսափում էր: Իսկ երբ իր
խօսելիքը վերջացրեց, նա իսկոյն աջը մեկնելով մեզ,

—Դէհ, բաւական է, յողնեցայ, հիմա գնացէք,—ասաց
նա, և մենք դուրս եկանք:

Այդ իմ վերջին տեսակցութիւնն էր Սրբիմեանի հետ:

Վ Ե Ր Զ



ԿԵՐ
10/1

4609

2013

<< Ազգային գրադարան



NL0031681

4467